

Հարկերն քածին

- Խմբագրական.....1
- Լրատուական.....2-6
- Ապրիլեան. յուշեր.....7
- Ապրիլեան. Հայ. ցեղ. ճանաչման ընթացքը 8-10
- Հայաստան առաքւած օգնութիւնը.....11
- Հայաստանին ՀԲԸՄ-ի յատկացումները. 12-13
- Էդ. Բաղդասարեանի յօրելեանը.....14-15
- Մշակոյթ.- Իրանահայ Գրականութիւն.....16
- Մշակոյթ.- Աշակերտական յաջող բեմ.....17
- Մշակոյթ.- Թեհրանի հայ համայնքի պատ...18
- Մշակոյթ.- Ուղղագրութեան կանոններ...19-20
- Մանկական.....21
- Ստացւած գրութիւններ.....22

Պարսկերէն քածին

- Խմբագրական.....1
- Ամփոփ լուրեր՝ Իրանահայ համայնք.....2
 - Իրան.....2
 - Հայաստան.....2
 - Միջազգային.....5
 - Ձանազան.....5
- Հայերէն-պարսկերէն-անգլերէն առածանի.....5
- Հարցազրոյց6-7
- Սերի դաշնագիրը.....8
- Գրականութիւն.....9-10



Շապիկի առաջին էջում

Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցին՝ ապրիլեան օր

Շապիկի վերջին էջում

Էդ. Բաղդասարեանի 20-ամեայ յօրելեան՝ հրատարակւած գրքերից



ԾՅՄ 48-50 30 **ՀԱՅԿ**, 2002 Ա.

No. 48-50 30 April 2002

Խումբագրութեան Կրտսույր

Ի. Է. 3-ն. Է. 3-Յ. Է. 2 Ն. 3-ն. 3-Յ.
2. Է. 3-ն. 3-Յ. Է. 3-ն. 3-Յ.

Պատմական փաստ հայկական ցարդերի մասին



Բուսապատմի Այդաքին գարծեյի
Լախապարի հեռագիրը Փարիզում
և Լոնդոնում դեպատմաներ
Իզվոյսկուն և ՔենկենդոյՅին

Հեռագիր No. 1876
12 ապրիլի 1915 թ.

Վկայակոչում եմ իմ No. 1818 հեռագիրը

Նախարարութիւնում ստացել եմ նոր տեղեկութիւններ Ասիական Թուրքիայում տիրող անիշխանութեան և թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածի մասին: Բարեհաճէք առաջարկել Ֆրանսիական/անգլիական կառավարութեանը մեզ և Անգլիայի/Ֆրանսիայի հետ համատեղ դիմում հրապարակել՝ ուղղւած Բ. Դռանը, որի մէջ անձնական պատասխանատութիւնը հայերի կոտորածի համար դրի Թուրքիայի նախարարների խորհրդի բոլոր անդամների , ինչպէս և՛ այդ իրադարձութիւնների հետ առնչող բոլոր քաղաքացիական ու զինորական պաշտօնատար անձանց վրայ:

Դիմումի մէջ կարելի է յիշեցնել այն ճնշամիջոցները, որոնք ընդունւած են Երուսալի կողմից 1860 թականին՝ Սիրիայում տեղի ունեցած կոտորածից յետոյ : Ֆրանսիական/անգլիական կառավարութեան համաձայնութեան դէպքում բարեհաճէք պայմանաւորել դիմումի տեքստի կապակցութեամբ, որը ցանկալի կլինէր որքան հնարաւոր է շուտ հրապարակել երէք երկրներում էլ՝ միևնոյն օրը:

Սազունով

Տ՚՚՜՜՜՜ Մ՚՚՜՜՜՜ Մ՚՚՜՜՜՜

Շայ Մայրերի Օրւան Նկիրած Ձեռնարկ Փերիոյ Կրթասիրաց միութեան Կենտրոնատեղիում

Ապրիլի 7-ին Փերիոյ Կրթասիրաց միութեան Թեհրանի մասնաճիւղի կենտրոնատեղիում (Մասուն քաղաքամաս) նոյն միութեան կանանց բաժանմունքի նախաձեռնութեամբ կազմակերպել էր իր անդրանիկ ձեռնարկը՝ նիւրած Մայրերի օրւան:

Յատկանշական է, որ օրւայ հանդիսութեանը, որին ներկայ էին մեծ թուով կանայք, հրաւիրւած էին նաեւ Իրանի դէմ Իրաքի կողմից պարտադրւած պատերազմի տարիներում զոհուած հայ նահատակների մայրերը:

Ձեռնարկի աւարտին միութեան կողմից յուշանուէր յանձնեց ներկայ ամենատարեց մօրը:

Շաղորդագրութիւն

Համաձայն նախապէս տրւած յայտարարութեան՝ շաբաթ, ապրիլի 6-ի երեկոյեան ազգային առաջնորդարանի սրահում Հայաստան-Սփիւռք երկրորդ խորհրդաժողովի հարցով տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում՝ մասնակցութեամբ Թեհրանի 24 միութիւնների ներկայացուցիչների:

Հանդիպման սկզբում Հայաստան-Սփիւռք երկրորդ խորհրդաժողովը նախապատրաստող յանձնախմբի մինչ այժմ տարած աշխատանքների կատարած ծրագրատրումների մասին ներկայներին տեղեկութիւններ փոխանցեց յանձնախմբի անդամ պրն. Ռոբիկ Կարապետեանը: Համաձայն պրն. Ռոբիկ Կարապետեանի տւած բացատրութեան՝ երկրորդ խորհրդաժողովին մասնակցիւնը ազատ է, սակայն իրանահայ համայնքի ակտիւ մասնակցութիւնը ապահովելու համար՝ ենթայանձնախրմբեր են կեանքի կոչել, որոնք արդէն իսկ աշխատանքներ են ունեցել: Այնուհետեւ յանձնախմբի միւս անդամ պրն. Ռոբերտ Մարգարեանը բացատրութիւն տւեց ենթայանձնախմբերի տարած աշխատանքի մասին եւ այդ ուղղութեամբ նաեւ տեղեկացրեց, որ մշակութային հարցերի ենթայանձնախումբը ծրագրել է ուրբաթ, ապրիլի 19-ին կազմակերպել միօրեայ սեմինար, որտեղ իրենց զեկուցումները կը ներկայացնեն մշակութային հարցերին լաւատեղեակ համայնքիս մտաւորականներն ու արեւստագէտները: Հանդիպման ընթացքում Թեհրանի հայկական միութիւններին եւս կոչ արեց իրենց յարկի տակ աշխատող արեւստագէտներին եւ տեղեակ անձանց քաջալերել իրենց զեկուցումներով մասնակցելու այս սեմինարին: Սեմինարին մասնակցել ցանկացող անհատները մինչեւ ապրիլի 15-ը իրենց զեկուցումները ազային առաջնորդարանի միջոցով տւեալ ենթայանձնախմբերին պիտի յանձնեն:

Հանդիպման ընթացքում նաեւ խորհրդակցութիւն կատարեց համայնքիս կողմից յիշեալ խորհրդաժողովին մասնակցող պաշտօնական պատուիրակութեան կազմի մասին եւ արդիւնքում որոշեց Թեհրանի հայկական միութիւնների կողմից 8 հոգի մաս կազմեն յիշեալ

պատուիրակութեանը, որոնց ընտրութիւնը վստահեց Թեհրանի հայոց Թեմական խորհրդին:
**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ
ՆԱԽԱՊԱՏՐԱՄԱՏՈՂ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ**

Թեհրանի Շայոց Թեմի Առաջնորդ Չորակցեց Պաղեստինի Ազատագրական Պայքարին

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մեայոս եպսկ. Սարգսեանը կիրակի, ապրիլի 7-ի առաւօտեան մասնակցելով Իրանի պետական հեռուստատեսութեան համաշխարհային արբանեակային ցանցի (IRIB-1) «Ձաւմէ ջամ 1» կայանի «Պրպտում» ծրագրի կլոր սեղանին, որը ուղղակիօրէն եթերում է ամբողջ աշխարհում, քննարկելով Պաղեստինի վերջին իրադարձութիւնները՝ դարձեալ դատապարտեց Իսրայէլի ոսնձգութիւնները եւ զօրակցութիւն յայտնեց պաղեստինցիների արդար պահանջին:

Տ՚՚՜՜՜՜

Իրանական Չանազան Շրջանակներ Շովանատրում են Պաղեստինեան Դատը

Պաղեստինի ինքնավար վարչակազմի քաղաքական բաժնի տնօրէն Ֆարուղ Ղոդումին Իրանի արտգործնախարար Խառազի հետ հեռախօսակցութիւն ընթացքում գնահատեց Իրանի դիրքորոշումը՝ Պաղեստինի ժողովրդի պայքարը հովանատրելու առումով: Արտգործնախարարութեան տեղեկատուութեան ու մամլոյ գրասենեակի հաղորդման համաձայն՝ Ղոդումին բացատրելով բռնագրաւած տարածքների իրավիճակը, աւելացրեց, որ արագ թափով աւելանում է պաղեստինցի զոհերի թիւը: Նա նաեւ շատ ծանր բնութագրեց Պաղեստինի անպաշտպան ժողովրդի եւ վիրատուների իրավիճակը: Հեռախօսակցութիւն ընթացքում Իրանի արտգործնախարար Խառազին յայտարարեց, որ Իրանի կառավարութիւնը եւ ժողովուրդը հովանատրում են ինքիփաղան, որը Պաղեստինի ժողովրդի իրատեանչ պայքարի խորհրդանիշն է:

Թ՞՞՞՜ի Յ՜՜

Թուրքիան նախապատրաստվում է ... ապրիլի 24-ին

ԱՆԿԱՐԱ, 4 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՄ: Թուրքիան դիվանագիտական պայքար է սկսել ապրիլի երկրորդ կեսին միջազգային հանրության կողմից «Հայկական հարցի» հնարավոր արժարձման դէմ:

Թուրքական «Հյուրիեթ» թերթը, հիշեցնելով, որ յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին աշխարհի տարբեր երկրներում «սկսում է շահարկվել Հայոց ցեղասպանությունը», գրում է, որ Թուրքիայի արտգործնախարարութիւնը մտադիր է «կանխարգելիչ» քայլեր ձեռնարկել այդ ուղղութեամբ: Թերթը նշում է, որ դրան Թուրքիային դրդել է Ամերիկայի հայկական համագումարի

կողմից ԱՄՆ-ի նախագահ Բուշին ուղղված ուղերձը, որտեղ պահանջվում է ապրիլի 24-ի իր ավանդական հայտարարության մեջ օգտագործել «ցեղասպանություն» տերմինը: Ըստ «Հյուրիեթի», Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանությունն իր հերթին պահանջել է ոչ մի դեպքում տուրք չտալ հայերի կոչերին:

Շվեյցարիան քերես քննարկի Հայոց ցեղասպանության հարցը

«Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեռի առաջարկ քաղաքական որոշ ուժերի կողմից արված է Շվեյցարիայի կոնֆեդերացիոն խորհրդարանին: Հարցը հավանաբար կլվի հունիսի նստաշրջանում», նշեց օրերս Հայաստան ժամանած Ժնևի կառավարության անդամ, Էկոնոմիկայի, զբաղվածության եւ արտաքին գործերի նախարար Կարլո Լաբրեշտը: Ժնևի կանտոնը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռն ընդունել էր 2001 թ.-ի դեկտեմբերի 10-ին: Սակայն պրն Լաբրեշտն այստեղ է այլ առիթով՝ Ժնևի կանտոնի ֆինանսավորած մի քանի ծրագրերի իրականացմանը հետևելու: Խոսքը Արթիկի հիվանդանոցի տանիքի վերանորոգման եւ, դարձյալ Շիրակի մարզում, չորս գյուղեր խմելու եւ ոռոգման ջրով ապահովելու մասին է: Բոլոր ծրագրերն էլ, բացառությամբ մեկ գյուղի ջրի, գրեթե ավարտուն են: Անցյալ տարի էլ Շիրակում եւս մի գյուղի ոռոգման ջրի խնդիրը լուծվել է Ժնևի կանտոնի տրամադրած գումարներով: Այս կարգի՝ առողջապահության, կենցաղի բարելավման, կանանց տեղեկատվությամբ ապահովելու ծրագրեր կանտոնն իրականացնում է իր համագործակցության բյուջեից՝ հիմնականում Լատինական Ամերիկայում եւ Աֆրիկայում: Պրն Լաբրեշտը այս եւ կրթության խնդիրներին վերաբերող համագործակցության մասին խոսել է իր հայ գործընկեր Վարդան Օսկանյանի հետ: Շվեյցարացի նախարարն արժանացել է Ամենայն հայոց կաթողիկոսի ընդունելությանը: Ամփոփելով մեր երկրից ունեցած տպավորությունները՝ Կարլո Լաբրեշտը նշեց. «Չեր երկիրն ունի տնտեսական դժվարություններ, որոնց հիմնական պատճառներից է մեկուսացված լինելը: Քանի որ Հայաստանն էլ Շվեյցարիայի նման փոքր երկիր է, գարգացման առումով խիստ կարեւոր է կրթության բարձր որակը»:

Ապրիլի 24-ը հիշատակի օր Վիսկոնսինի նահանգում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ Վիսկոնսինի նահանգի Սենատը ընդունել է նահանգի տարածքում ապրիլի 24-ը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. իրականացված Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի օր ճանաչելու բանաձեռ: Ինչպես հաղորդում է Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեն (ANCA), բանաձեռում ընդգծվում է, որ 1.5 միլիոն հայեր սպանվել եւ հարյուր հազարավոր ուրիշներ տեղահանվել են Օսմանյան կայսրությունում, ինչպես նաեւ նշվում է, որ Թուրքիան շարունակում է ժխտել ցեղասպանության փաստը: Վիսկոնսինի նահանգի Սենատը այդ բանաձեռի ընդունումը բացատրել է ցեղասպանության հանցագործությունների մասին բնակչության իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությամբ՝ ապագայում դրանց կանխարգելման համար:

«Բոստոն գլոբ». «Վաշինգտոնը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը» Աթաթուրքը հողին հավասարեցրեց Անատոլիայի հնադարյան հայկական, ասորական, հունական մշակույթը

«Թվում է, Թուրքիան մաքրվել է դավաճաններից՝ քրիստոնյաներից եւ այլազգիներից, Թուրքիան թուրքերի համար է», մեջբերելով «ենթադրյալ աշխարհիկ եւ ժողովրդավարական» Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի խոսքերը, ազդեցիկ «Բոստոն գլոբ» օրաթերթը մարտի 25-ի համարում գրում է, որ, իրականում, Մուստաֆա Քեմալը հողին հավասարեցրեց Անատոլիայի հնադարյան հայկական, ասորական եւ հունական մշակույթը, 1922 թ. սեպտեմբերին նրա հրամանով պատմական Զմյուռնիա քաղաքում զանգվածաբար կոտորվեցին 100 հազար հույներ եւ 30 հազար հայեր, 1923 թ. Փոքր Ասիայից արտաքսվեցին ավելի քան 1 մլն հույներ: Հույն ուղղափառ քրիստոնյաների համար «ջիհադ», «գլավուր», «անհավատ» տերմինները, որոնք այսօր օգտագործվում են բեն Լադենի զանգվածային սպանությունները նկարագրելու նպատակով, նորություն չեն: Հողվածում, որը վերնագրված է «Ահաբեկչության համար ԱՄՆ-ը պետք է ճզմի Թուրքիային», ընդգծվում է, որ այն, ինչ այսօր անում են Թալիբանն ու «Ալ Դաիդան», նույնն է, ինչ 1914-23 թթ. անում էր օսմանյան կամ քեմալական Թուրքիան հայերի, հույների, ասորիների նկատմամբ: «Բեն Լադենի եւ նրա հետեւորդների նման երիտասարդ թուրքերը եւ Մուստաֆա Քեմալը տոնում են անմեղների մահը: Երիտթուրքերը ծրագրեցին եւ իրականացրին ավելի քան 1.5 մլն հայերի ցեղասպանությունն ու զանգվածային բնաջնջումը: Վաշինգտոնը պետք է վերջնականապես լրջորեն վերաբերվի չարիքին իր բոլոր տեսակների մեջ եւ ճանաչի Հայոց ցեղասպանությունը: ԱՄՆ-ը պետք է ճանաչի նաեւ Թուրքիայի իրականացրած հույների եւ ասորիների բնաջնջումը: Ի վերջո, ԱՄՆ-ը պետք է ճնշումներ բանեցնի Թուրքիայի վրա, որպեսզի վերջինս վերջ տա Կիպրոսում ահաբեկչության հովանավորությանը, էթնիկ գտումներին», գրում է «Բոստոն գլոբը»:

«Գերմանիան, Հայկական հարցը եւ Հայոց ցեղասպանությունը» Երատարակվել է Գեւորգ Ղարիբջանյանի ուսումնասիրությունը

Անվանի պատմաբան Գեւորգ Ղարիբջանյանի գիտական մեծածավալ ուսումնասիրությունները ծնունդ են տվել բազմաթիվ գրքերի ու հոդվածների: Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի անխոնջ պրպտումների դրսեւորումներից է վերջերս լույս տեսած «Գերմանիան, Հայկական հարցը եւ Հայոց ցեղասպանությունը» գիրքը: Գրքում հեղինակն անդրադարձել է 1878-1918 թթ. պատմական իրադարձություններին, երբ Հայաստանն ու հայերը դարձել էին միջազգային քաղաքականության օբյեկտ, իսկ Հայկական հարցը դադարել էր սոսկ Օսմանյան կայսրության ներքին խնդիր լինելուց եւ փոխադրվել միջազգային հարաբերությունների ոլորտ: 19-րդ դարի 2-րդ կեսից Մերձավոր Արեւելքում մեծ դեր է սկսում խաղալ

կայգերական Գերմանիան «Գրոհ դեպի արեւելք» արտաքին քաղաքականությամբ, որի նպատակն էր ընդարձակել գերմանական ազդեցությունը, թափանցել Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ կռվախնձոր դարձած Մերձավոր Արեւելք: Նրանց հակասությունների կենտրոնը Օսմանյան կայսրությունն էր, այդ իսկ պատճառով գերմանական իշխանություններն ամեն կերպ հովանավորում էին Թուրքիային: Գրքի առաջին բաժնում հեղինակը քննում է կայգերական Գերմանիայի քաղաքական գործիչների՝ Թուրքիային հովանավորելու հայավնաս գործունեությունը: Ընդհանրապես գերմանական ռազմական օգնության, թուրքական բանակը դառնում է ժամանակակից բանակ: Իսկ Բեռլինի կոնգրեսից հետո թշնամությունը հայերի նկատմամբ ուժեղանում է: Հղացվում է հայության բնաջնջման սուլթան Համիդի ծրագիրը, որն արգելում է անգամ «Հայաստան» անվան հիշատակումը: Մեծ տերությունների հետ կայգերական Գերմանիան գլխավոր հանցագործն էր Թուրքիայի վեց վիլայեթներում հայկական կոտորածների կազմակերպման եւ բարենորոգումների ճախողման մեջ: Գերմանիայի հովանավորությամբ հայերի ճակատագիրը հանձնվում է օսմանյան սրին: Հեղինակը մեջբերում է Հայկական հարցի նկատմամբ Թուրքիային հովանավորող գերմանական կառավարող շրջանների քաղաքականությանը քաջատեղյակ մեծ հայրենասեր Ավետիք Իսահակյանի խոսքերը, որը, մերկացնելով թուրքագերմանական ջարդարարներին, գրում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Վիլիելմ 2երդ կայգերն իր բորենիներով թե տվեց իթքիհատի, պանթուրական բանդագուշանքին եւ... ջնջեցին ողջ արեւմտահայությունը, մի հինավուրց ժողովուրդ կուլտուրայով, արվեստով, ֆուլկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, ջնջեցին նրա եւ անցյալը, եւ ներկան, եւ ապագան»:

Հեղինակը պաշտոնական Գերմանիայի դիրքորոշումն ու քաղաքականությունը ներկայացնելուց հետո ընդգծում է քաղաքակիրթ Գերմանիայի առաջադեմ մարդկանց գայրոյթը հայկական կոտորածների դեմ, որոնք պաշտպանել են համաշխարհային քաղաքակրթության մեջ իր արժանի ավանդը ներդրած, իր ազատության համար մարտնչող հայ ժողովրդի դատը: Ֆրիդրիխ Էնգելսը, Էդուարդ Բեռնշտայնը, Յոզեֆ Մարկսը, Կառլ Կաուցկին, Ռոզա Լյուքսեմբուրգը, Կառլ Լիբկնեխտը, Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները եւ շատ ուրիշներ մերկացրել են թուրքական բարբարոսությունները, գերմանական կառավարող շրջանների թուրքամետ քաղաքականությունը՝ աշխարհի առաջավոր մարդկանց կոչ անելով հանդես գալ հայ ժողովրդի պաշտպանությամբ:

Պատմաբանի հավաստմամբ, 1890-ական թթ. բազմաթիվ լեզուներով լույս տեսած շատ գրքեր ու հոդվածներ անհերքելի կերպով ապացուցում են, որ Օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանները նախօրոք մշակել էին արեւմտահայերի բարբարոսական ոչնչացման ծրագիրը, որի իրականացմանն օժանդակել են կայգերական Գերմանիայի ղեկավարները:

«Արմենիկում»-ի հետ կապված հայ-հնդկական ծրագիր

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կարծում եմ, որ «Արմենիկում» դեղամիջոցի հետ կապված գործընթացը դժվարությամբ, բայց եւ այնպես՝ հաստատականորեն առաջ է գնում, այսօր հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ նշեց ՀՀ նախագահին կից Անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Նա տեղեկացրեց, որ Հնդկաստանի հետ «Արմենիկում»-ն վերաբերյալ բավականին հաջող գործարք է կնքվել:

Ս. Սարգսյանի խոսքերով, մոտ ժամանակներս սպասվում է «Արմենիկում» կենտրոնի բժիշկների եւ սպասարկող անձնակազմի այցելությունը Հնդկաստան, որպեսզի տեղում սկսեն իրագործել հայկահնդկական համապատասխան ծրագիրը:

Արկադի Դուկասյանը միջազգային հանրությանը կոչ է անում ճանաչել ԼՂ անկախությունը

ՓԱՐԻԶ, 25 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փարիզում «Ֆրանսպրես»-ին տված հարցազրույցում ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը Հայաստանին, Ադրբեջանին եւ ողջ միջազգային հանրությանը կոչ է արել ճանաչել ԼՂ անկախությունը: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդման համաձայն, Դուկասյանը նշել է, թե միջազգային հանրությունը պետք է փոխի իր դիրքորոշումը, քանի որ արդեն 8 տարի է, ինչ գործում է Ադրբեջանի հետ ստորագրված հրադադարի պայմանագիրը ու փոխվել են իրողությունները: Նա մանրամասնել է, թե «իր երկիրը մտադիր չէ հավերժ անկախ մնալ, այլ ցանկանում է անկախ ճանաչվել՝ հետագայում Հայաստանի մաս դառնալու համար»: Ըստ «Ֆրանսպրես»-ի, 44-ամյա Դուկասյանը պատրաստվում է օգոստոսին կայանալիք նախագահական ընտրություններին եւ հույս ունի, որ Ղարաբաղում ընթացող դեմոկրատական գործընթացները կհանգեցնեն այն բանին, որ Ղարաբաղի օրինականությունը կճանաչվի եւ միջազգային հանրությունը կսկսի ֆինանսապես օգնել իր երկրին:

Հանդիպելով Ֆրանսիայի ԱԳ-Ն պաշտոնյաների հետ, Արկադի Դուկասյանը հայտնել է, որ առաջիկա ամիսներին մտադիր է աշխուժացնել դիվանագիտական ջանքերը եւ պատրաստվում է այցելել Մոսկվա ու Վաշինգտոն:

Ժնեւի նախարարի այցը Ստեփանակերտ

Ապրիլի 2-ին ճանաչողական այցով Ստեփանակերտ էր ժամանել Ժնեւի կառավարության էկոնոմիկայի, գրավածության եւ արտաքին գործերի նախարար Կարո Լամբրեշտը: Այցը կազմակերպել էր ՀԲԸ Միության ժնեւյան գրասենյակը, որի նախագահ տիկին Թալին Ավագյանը ուղեկցում էր հյուրին:

Նույն օրվա երեկոյան նրան ընդունեցին ԼՂՀ վարչապետ Անուշավան Գանիեյանը եւ ԼՂՀ փոխարտգործնախարար Մասիս Մայիլյանը: Հանդիպումների ժամանակ արծարծվեցին տնտեսական եւ արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցեր:

Մասնավորապես, ԼՂՀ փոխարտգործնախարարը հյուրին ներկայացրեց Ղարաբաղյան հակամարտության

կարգավորման ժամանակակից փուլը, ինչպես նաև հիմնախնդրի լուծման դարաբաղյան կողմի դիրքորոշումը: Խոսվեց նաև ԼՂՀ-ում ժողովրդավարության մակարդակի բարձրացմանն ուղղված՝ հանրապետության ղեկավարության ձեռնարկված քայլերի մասին, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում հակամարտության կարգավորման համար: Մ. Մայիլյանը նշեց, որ չնայած իրավաբանորեն չճանաչված լինելու հանգամանքին, ԼՂՀ-ն հետևողականորեն իր օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու միջոցներ է ձեռնարկում:

Երեկ շվեյցարացի հյուրին ընդունեց նաև ԼՂՀ նախագահ Արկադի Գուկասյանը:

ԼՂՀ նախագահը Կ. Լամբրեշտին ծանոթացրել է պարտադրված պատերազմի հետեւանքով հանրապետության տնտեսական համալիրում ստեղծված իրադրությունը: Դ.ա. ինչպես նշեց նախագահը, լուրջ բարդություններ է ստեղծում ԼՂՀ տնտեսական զարգացման համար: Առաջնահերթ խնդիր է դարձել մարտական գործողություններից ավերված հանրապետության արտադրական ենթակառուցվածքի վերականգնումը: Նշվել է նաև, որ ԼՂՀ չճանաչվածության պատճառով հանրապետությունը զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Ջրույցի ժամանակ կարեւորվել է Արցախի բնակավայրերի ջրամատակարարման բարելավման հարցը: Հաշվի առնելով, որ ժնեի կառավարությունը որոշակի փորձ ունի Հայաստանի Արտաշատի եւ Շիրակի մարզերում նմանատիպ նախագծերի իրագործմանն աջակցելու գործում, պրն Լամբրեշտը խոստացել է հայրենիք ժամանելուն պես ուսումնասիրել ԼՂՀ-ին նման օգնություն ցույց տալու հնարավորությունը:

Ժնեյի նախարարը նույն օրը հանդիպել է նաև Ստեփանակերտի քաղաքապետ Համիկ Ավանեսյանի հետ:

**Կառուցվում է ԼՂՀ «Ելուսիս-հարավ»
ավտոմայրուղին**

Լեռնային Գարաբաղի Հանրապետությունում շարունակվում է «Հյուսիսհարավ» ավտոմայրուղու «Դաշբուլաղ-Բալուջա» 9,7 կիլոմետրանոց հատվածի շինարարությունը: Այն արդեն կառուցված «Կիչան-Դաշբուլաղ» հատվածի շարունակությունն է՝ դեպի Ստեփանակերտ:

Հատվածի շինարարությունը սկսվել է 2001 թվականի դեկտեմբերին: Ներկայումս կատարվում են հողային աշխատանքներ, տեղադրվում են արհեստական կառուցվածքներ: Համաձայն պայմանագրի՝ հատվածը շահագործման կհանձնվի 2003 թվականի գարնանը: «Դաշբուլաղ-Բալուջա» հատվածը կառուցում է Լեռնային Գարաբաղի «Վրեժ» ՓԲԸ-ն:

Օրերս հիմնադրամի վարչությունը պայմանագիր է կնքել Լեռնային Գարաբաղի «Դորոժնիկ» ՍՊԸ-ի հետ «Հյուսիսհարավ» ավտոմայրուղու Ծեխեր գյուղի մոտ գտնվող կամրջի շինարարության համար: «Դորոժնիկ» ՍՊԸ-ն ընտրվել է մրցույթով՝ առաջարկելով հնարավոր նվազագույն արժեքը: Կամրջի շինարարությունը կսկսվի ապրիլին եւ կավարտվի նոյեմբերին:

**Հայաստանի պատվիրակությունը
Սամցխե-Ջավախքում**

ԹԲԻԼԻՍԻ, 5 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում են հանրապետության վարչապետի գլխավոր խորհրդական Ստեփան Մարգարյանը եւ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը, ուրբաթ օրը երկօրյա այցով ժամանել է Վրաստանի Սամցխե-Ջավախքի տարածաշրջան: Սամցխե-Ջավախքի երկրամասային վարչակազմի մամուլի ծառայությունում Փրայմ նյուսին հայտնել են, որ այցը ճանաչողական է, եւ հայաստանցի հյուրերն արդեն հանդիպում են անցկացրել տարածաշրջանի նահանգապետ Թեյմուրազ Մոսիաշվիլու հետ, ընդ որում բանակցություններ մասամբ ընթացել են դեմոսիակ: Հայկական պատվիրակության անդամները, որոնց ուղեկցում է Վրաստանում Հայաստանի դեսպան Գեորգի Խոսրոբյը, ուրբաթ օրվա երկրորդ կեսին Ախալցխայում հանդիպել են հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

**Նոր շքանշաններ՝ «Տիգրան Մեծ» եւ
«Վարդան Մամիկոնյան»**

ԵՐԵՎԱՆ, 3 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 3-ին առաջին ընթերցմամբ ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Տիգրան Մեծ» եւ «Վարդան Մամիկոնյան» շքանշանների մասին օրինագծերը եւ դրանից բխող լրացումներ կատարեց «ՀՀ պետական պարգևների մասին» գործող օրենքում:

Հայաստանաբնակ քրդերը նշեցին Նովրուզը

ԵՐԵՎԱՆ, 25 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ Հայաստանում ապրող քրդերը նշեցին մուսուլմանական աշխարհի Նոր տարին՝ Նովրուզը: Ավանդաբար այս տոնը նրանց համար եղել է պայքարի տոն՝ հանուն իրենց ժողովրդի ազատության եւ անկախության եւ կոչվել է «նովրուզյան կռիվներ»: Այս մասին ասաց ԶԳԿ Կովկասյան տարածաշրջանի ղեկավար Սադունը, հանդես գալով Նովրուզի առթիվ Երեւանի մարզահամերգային համալիրում երեկ կազմակերպված ցերեկույթում, որը նվիրված էր հայկքորդական բարեկամությանը: Այստեղ էին հավաքվել Հայաստանի տարբեր մարզերի քուրդ բնակչության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Յերեկույթը եզրափակվեց համերգով, ելույթ ունեցան երգիչ-երգչուհիներ, զեղարվեստական խմբեր՝ ներկայացնելով հայ եւ քուրդ ժողովրդական երգեր ու պարեր: Այսպիսի տոնախմբությունները, Արմենպրեսի թղթակցին ասաց քուրդ գրող, իրավապաշտպան Ալիխան Մամեն, բարձրացնում են ժողովրդի մարտական ոգին, նրան կապում իր մայր արմատներին: Ահա թե ինչու տարիներ շարունակ Թուրքիայում արգելվում էր այս տոնը, թեպետ քրդերը չէին ընկրկում եւ այդ տոնը նշում էին որպես իրենց ազատության ու պայքարի խորհրդանիշ: Տեսնելով, որ արգելքն անգոր է, Թուրքական իշխանություններն ի վերջո պաշտոնապես ընդունեցին այդ տոնը, եւ հիմա քրդերն այն նշում են աշխարհի բոլոր ծայրերում:

ԹՇԻ 1/2 3ՄԻ

ԲաՖֆի Մանուկյանը՝ Գլենդեյլի նոր քաղաքապետ

ԳԼԵՆԳԵԼ, 3 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: Ապրիլի 2-ին Կալիֆոռնիայի Գլենդեյլ քաղաքի նոր քաղաքապետ է ընտրվել (քաղաքի պատմության մեջ 2ևրդ անգամ) քաղաքային խորհրդի հայ անդամ ԲաՖֆի Մանուկյանը: Գլենդեյլի քաղաքապետական խորհրդի հանդիսավոր նիստում, որին ներկա են եղել քաղաքի բարձրաստիճան պաշտոնատարներ, հայկական եւ ամերիկյան կազմակերպությունների ներկայացուցիչներ եւ այլ հյուրեր, ԲաՖֆի Մանուկյանին ողջունել են նախկին քաղաքապետ Գաս Գոմեսը եւ այլ գործիչներ:

Անցած օգոստոսին ԲաՖֆի Մանուկյանը մաս է կամել Հայաստան ժամանած ԱՄՆ ներկայացուցիչների պալատի անդամ Ադամ Շիֆի գլխավորած պատվիրակության:

«Ամերիկայի ձայնը» հիշեցնում է, որ Գլենդեյլի առաջին հայ քաղաքապետը եղել է Լարի Ջարյանը:

Նորիկ Կարապետյանը «Ջավախքի» նախագահ

Մարտի 23-ին Ախալքալաքում տեղի ունեցավ «Ջավախք, ժողովրդական շարժում» կազմակերպության հերթական 7ևրդ կոնֆերանսը, որին մասնակցել է 350 պատվիրակ: Այդ կազմակերպությունը Ջավախքի ամենաազդեցիկ հասարակական կազմակերպությունն է եւ զգալի դեր է կատարում տարածաշրջանում հայության կյանքի կազմակերպման եւ կայունության ապահովման գործում: Կազմակերպության նախագահ է ընտրվել Նորիկ Կարապետյանը:

«Հզոր հայրենիք» կուսակցության անունից շնորհավորում ենք «Ջավախք, ժողովրդական շարժում» կազմակերպության նորընտիր նախագահ Նորիկ Կարապետյանին եւ նախագահության ողջ կազմին, մտղքում նրանց խաղաղ եւ բեղմնավոր աշխատանք:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ, «Հզոր հայրենիք» կուսակցության նախագահ

Ջավախքը ինքնակառավարում է պահանջում Վրաստանի կազմում

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 8 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: «Ջավախքը պահանջում է ոչ թե ինքնավարություն, այլ ինքնակառավարում Վրաստանի կազմում, որը չի հակասում Վրաստանի սահմանադրությանը: Իրականությանը չհամապատասխանող լուրերը տարածում են զանգվածային լրատվամիջոցները, եւ հիմնախնդիրը ոչ թե Ջավախքում է, այլ նրա շուրջը»: Ախալքալաքում հայտարարել է ՀՀ վարչապետի խորհրդակցական Ստեփան Մարգարյանը, որը ՀՀ պատվիրակության կազմում երկօրյա այցով գտնվում էր Վրաստանի Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի կենտրոնում: Պատվիրակության կազմում էին նաեւ Վրաստանում ՀՀ դեսպան Գեորգի Խոսրոբյանը եւ ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը:

Սամցխե-Ջավախքում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլու հետ

համատեղ տված մամլո ասուլիսում, ըստ Ա-ԻՆՖՈ գործակալության, ՀՀ վարչապետի խորհրդականը նշել է, որ Հայաստանի պետական կառույցներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում վիրահայության խնդիրներին:

Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչը մոտ ժամանակներս կայցելի Հայաստան: Ինչպես Փրայմ նյուսին ասել է Թեյմուրազ Մոսիաշվիլին, ուղեորությունը Երեւան կկայանա որպես պատասխան այց, որի շրջանակներում կքննարկվեն տարածաշրջանային եւ տնտեսական փոխգործակցության հարցեր: Նա նշել է, որ ներկայումս պատրաստվում է Հայաստան իր այցի ծրագիրը:

Ժակ Շիրակը պարզաբանումներ է տալիս ՌԱԿ-ին

Այս ամիս Ֆրանսիայում կայանալիք նախագահական ընտրությունների շեմին ֆրանսահայերի համակարգիչ հանձնախումբը (նախկին «Ապրիլ 24 կոմիտե») հարցեր էր ուղղել երկու գլխավոր թեկնածուներին՝ ներկայիս նախագահ Ժակ Շիրակին եւ վարչապետ Լիոնել ժոսպենին: ՌԱԿ Ֆրանսիայի շրջանային վարչության ատենապետ Ժան Վարուժան Սիրապյանն օրերս Ժակ Շիրակից հավելյալ պարզաբանումներ խնդրեց Հայոց ցեղասպանության ժխտման փորձերի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման առնչությամբ:

Իր պատասխան նամակում նախագահ Ժակ Շիրակը ՌԱԿ ատենապետին գրում է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ֆրանսիայի խորհրդարանն արդեն համապատասխան օրենք է ընդունել 2001 թ. հունվարի 18ին: Դա հիշողության պարտք է եւ ցույց է տալիս, որ Յեղասպանության փաստը չի կարող վիճարկվել: «Խոսքն անցյալ դարի ամենասահավոր ողբերգություններից մեկի մասին է, եւ պատմության վերաշարադրումն անընդունելի է: Ուստի մեր իրական նպատակը՝ հաշտեցման եւ խաղաղության նպատակը կարելի է իրականացնել միայն փաստերի վրա հիմնվելով», մասնավորապես գրում է Շիրակը: Նրա կարծիքով, Հայ դատին նպատակելու առավել մարդասիրական եւ արդյունավետ եղանակներն են կրթությունն ու ճանաչողությունը: Այդ նպատակով ինքն առաջարկել է հիմնել հայ մշակույթի, պատմության եւ քաղաքակրթության ինստիտուտ, որը կարծեուրի Ֆրանսիային եւ աշխարհին հայերի բերած նպաստը: Նախագահ Ժիրակը նամակում ցանկություն է հայտնում, որ տվյալ հարցում Ֆրանսիայի օրինակին հետեւեն Եվրոպան եւ ողջ աշխարհը: Ինչ վերաբերում է Հայաստանի շրջափակմանը, Ժակ Շիրակը դա մտահոգության լուրջ առարկա է համարում Եվրոպայի համար: Նրա կարծիքով, այդ իրավիճակը խոչընդոտում է ամբողջ տարածաշրջանի զարգացմանը: Եշտեղով, որ վերջին տարիներին ինքը Ելիսեյան պալատում երկու անգամ կազմակերպել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներ Լեռնային Գարաբաղի խնդրի լուծում գտնելու նպատակով, Շիրակն ընդգծում է, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը, իր կարծիքով, կհանգեցնի հայ-թուրքական հարաբերությունների բարելավման:

Խարբերողի Անտոնեան Եղայի Պատմածը (ծնւ. 1910 Թ.)

Ծնողներս հողագործ մարդիկ էին: Կը յիշեմ, ձմռան օրերին մեծ վերմակ մը կը դնէին սեղանի վրայ, տակը չանախով վառելիքը կը դնէին, կը վառէին, քուրսին կը նստէին: Կողքի տունը թուրք միտղիի տունն էր: Մեր տունը երկու հարկանի էր, կտուրից էինք ելք ու մուտք անում: Գիշեր մը թուրք միտղիը եկաւ մեր տունը, հորս ասաց.- Աղաբեկ ջան, էքքան տարի իրար հետ հաց ենք կերել, չեմ ուզում վատ բան ըլլա ձեզ, կառավարութենէն հրաման եկած է, որ հայերուն պիտի աքտորեն, պիտի կոտորեն...

Հէրս լռում էր, ձեն չէր հանում: Մէրս նրան սուջուխ-բաստուրմա էր հիրասիրում:

Միտղիի էրթալեն վերջը հայրս եղբորը ըսաւ.- Բ...քնեմ միտղիի բողազը, կուզէ՞ մենք երթանք, ինքը մեր տունը գրաւէ:

Սրա օրը, գիշերը եկան թուրք ասկերները: Գուռը կոտորելու չափ ծեծում էին ու ասում.- Գետաւոր, ձեզ արքայութեան:

Պապաս վախէն կոշիկները հանեց, իւրիկը մտաւ: Զարթոնքները ներս մտան, տեսան կոշիկները, ըսին.- Գետաւորը տանն է...

Բացին իւրիկը, հրացանի կոթով խփեցին պապայիս, պատի միջից քաշեցին, հանեցին դուրս ու տարին...

Է՛, անցեալս որ յիշում եմ, գիտեմ, որ վերքերս թագացան: Է՛, մենք ի՛նչ տանջանքներ ենք քաշել, ի՛նչ բաներ ենք տեսել...

Պապայիս քաշեցին տարան, միս օրը լսեցինք, որ գիտի բոլոր հայ տղամարդկանց տուններէն հաւաքել, տարել էին, նաթ էին լցրել, վառել, ոչնչացրել էին:

Սրա օրը եկան, մեզի հաւաքեցին, ոչխարների պէս քշեցին, ո՞րը չգիտենք: Ծամփին հագի քայլում էինք, ընկնում, կանգնում էինք: Երեխերը մայրերի փեշերից կախուրդ էին, չէին կարողանում քայլել...: Մի հատուկ կար, վրան ապլան-դափան կար փորագրած, հոնտեղէն ջուր խմեցինք... Զարթոնքներն իրենց ձեռքերն ոտքերի տակը քլոնուրհացի կտորներ էին շարտում, իսկ մենք՝ իրար ձեռքից էինք խլում, բոլորս ալ անօթի էինք...: Մեզ Գէր Զորի չոլերն էին տանում...

Պապաս շատ հարուստ մարդ է եղել: Մեծ մայրս եօթը աղջիկ է ունեցել՝, վեցը ողջ են մնացել: Բոլորն ալ շատ գեղեցիկ են եղել: Ժամանակին պապս ամէն ինչը ծախել էր, իր ընտանիքը երոպական հպատակ դարձել էր չորս աղջիկներին տարել Ամերիկա, իսկ երկու աղջիկները, ամուսնացած ըլլալով, մնացել էին Խարբերողում: Անոնցմէ մէկը մայրս էր, մայրս ալ Աննա մորաքոյրս: Թուրք զարթոնքները, երբ տեսան, որ մենք երոպական հպատակ ենք, մեզ ազգուցեցին, միսներին՝ իզով-թոզով տարան, կորցրեցին: Պապաս էր մի լաւութիւնը արել էր մեզ: Մենք մնացինք ճամփին, մի թուրքի գիւղում: Գիշերը գալիս էին, դանակը պահում վրաներս, ձայն հանելու իրաւունք չունէինք, թալանում էին մեր ոսկեղէնը, մեր խալիները, ամէ՛ն ինչը...: մայրս ինձ ու քրոջս տարաւ, տաւ թուրք որբեայրի կնոջ մը, որ մեզ պահի. գոնէ մենք ողջ մնանք: Ամէն թուրքի տունին առջեւը չորս-հինգ հատ որբ երեխայ կար մեռած, ընկած, տկոյր ու սոված...

-Բաջի՛, ալլահըն սեւերսէն բիր փատչայ էքմեդ վեր (Քոյրի՛կ, Աստուծոյ սիրուն, մի պատաստ հաց տուր),- ասում

էին էդ, որբ երեխերը: Եթէ թուրքերը խղճում, տալիս էին՝ լաւ, թէ չէ՛ սովից պատերի տակ ընկնում, մեռնում էին...

Էդ թուրք խանութի մօտ ես մնացի: Ծաշի սեղանը դնում էին, ուտում, պրծնում էին, խանութս էդ փշրանքները լցնում էր մի ամանի մէջ, վրան ջուր էր լցնում, փշրանքները փափկում էին, իմ առաջ էր դնում, ասում.- Յէ՛, գետաւոր դրգի (Կեն՛ր, գետաւոր աղջիկ):

Տան մէջ իմ տեղը դռան առաջն էր, ոնց որ շունը կապում ես դռան առաջ, ինձ էլ դռան առաջն էր տեղ տաւ: Տար՝ կուտէի, չտար՝ չէի ուտի: Չէր թողնում, որ տեղիցս շարժեմ, բայց, ոտքերս բոքիկ-սկլոյր ուղարկում էր ջրի. Յրաից մէկ ոտքս վեր էի քաշում, միւսը՝ գետնին, սառոյցի վրայ էի դնում, որ չըրսեմ...: Մերս մի ուրիշ թուրքի տանը լացք, մաքրութիւն կանգեր՝ մի փոքր հացի համար: Թուրք տէրը չէր ուզեր, որ մերս ինձ իր մօտ տանի, մի փոքր հացի համար ամբողջ օրը չարաչար կաշխատեցնէին...

Սրա քոյրս մնաց ուրիշ թուրքի տանը, խաբար չունեմ՝ ողջ է, թէ՛ չէ:

Օր մը մերս էկաւ, գաղտնի ինձի ըսաւ.- Ամերիկացին որբանոց է բացել, որի՛, էրթէ՛նք:

Ըսի.- Թուրք տանտերիս ըսեմ:

Ըսաւ.- Չէ՛, փախի՛ ինձ հետ:

Տարաւ ինձ գցեց ամերիկեան որբանոցի գռանը, ինքը գնաց քանի որ եթէ իմանային, որ մայրս ունեմ, ինձ ներս չէին առնէր:

Որբանոցում լաւ էր: Ծաշ էին տալիս: Օրը երկու անգամ ափի չափ հաց էին տալիս: Հացերուն մէկը կը կապէի՝ մօրս գաղտնի կուտայի, երբ կուգար ինձի տեսնալու:

Մեզի ըսին՝ ամբողջ որբանոցը Ամերիկա պիտի տանին, բայց յետոյ հրաժարեցին, Ֆորգոնով մեզի Հալեպ տարին: Ծանապրիին թուրքերը մեզի քարկոծում էին, մենք իրար վրայ էինք պառկել, որ մեզի չմեռցնեն...: Յետոյ մեզի տարին Բեյրութ՝ Լիբանան: Հոն խալիի գործարան կար: Ես տասը տարեկան էի, սկսայ խալի գործել: Մտքիս մէջ տեսածներս էին, գիշերները քունս կը փախեր, կը յիշէի...: Մի երկու կնիկ մեծ խալի էին գործում, խնդրեցի՝ ինձ սովորեցրին: Ես խալիի գլուխները կը գործէի: Գործարանի վերակացուն էկաւ, ինձի ըսաւ.- Ինչո՞ւ չես երթար:

Ըսի.- Ի՞նչ ընեմ, ես որբ եմ, մերս հեռում մեռնակ է ու սոված, գոնէ մի քիչ դրամ շահեմ, մօրս դրկեմ:

Արցունքներս տեսաւ՝ մեղքացաւ: Մի փոքրիկ դազգահ տեց, որ գործեմ, փող շահեմ: Ամիսը մի հատ խալի հանում, ահագին դրամ հաւաքեցի: Ուզեցի մօրս դրկեմ՝ ո՛չ հասցէն գիտեմ, ո՛չ մի բան: Միմչեւ հասցէն իմացայ, լսեցի, որ մերս սովից մահացել էր:

Էդ վախտը խաբար էկաւ, որ Ֆրանսացի գործարանատէր մը եկած է, խալի գործող է ուզում, քանի պիտի տաներ Ֆրանսա: Ես շուտ մը գնացի ցուցակագրուցի: Քանի մը օր ետքը խաբար եկաւ, որ պիտի գնանք: Փողերս մնացին գրասենեակը, առանց փողի գնացի, ըսի՝ ջահանա՛մը, մերս որ մահացել է, փողն ի՛նչ պիտի անեմ, ա՞՞քս պիտի էր, չիկայ բառը չիկար, հէջ չէինք գգում, որ օտար ժողովուրդ ենք: Ամբողջ օրը աշխատում էի, հոգնած գալիս էի, հանրակացարանի պէս տեղ մը կար, աղջիկներով կապրէինք, կուտէինք կը քնանայինք...

Հոն ալ ամուսնացայ խարբերողի որբ տղայի մը հետ... Ամէն մարդ իրեն հարմարը կը գնար, կարելուր՝ հա՛յ ըլլար, երկրացի՛ ըլլար... կաշխատէինք, կապրէինք...

1932 թ. յունար ամսին եկանք Հայաստան: Էկանք, տեսանք՝ խանութները միայն լուցկի կար, ո՛չ կաթ, ո՛չ հաց: Աղջիկս մէկ ու կէս տարեկան էր, չղիմացաւ չունի-չիկային,

մեռա...: Վերջը տղաս ծնեցաւ, մեծացաւ: Հիմա ես անոր մօտն եմ ապրում: Վերջը բարի՜ն ըլլա...:

ԱՅՆՅՅԻՅ . ռձՁՁՁՁ

Հայոց ցեղասպանութեան ճանաչման ընթացքը

Հայոց մեծ եղեռնից 87 տարի է անցել, եւ այդ ընթացքում հայութիւնն ամենուր ջանքեր է գործադրել ցեղասպանութեան պաշտպանական ճանաչման հասնելու: Չորս տարի առաջ Հայաստանը ցեղասպանութեան ճանաչման խնդիրը հռչակել է իր արտաքին քաղաքականութեան բաղկացուցիչ մասը: Սակայն, այդուհանդերձ, ցեղասպանութեան ճանաչման հարցում յաջողութիւնները համեստ են:

Ստորեւ ներկայացնում ենք արտերկրի զանազան մարմինների կողմից ընդունուած Հայոց ցեղասպանութեանը վերաբերող զանազան ակտերի հնարաւորին չափ լրիւ ամփոփագիրը, որը պատրաստել ենք ինտերնետի եւ մամուլի միջոցով հիման վրայ: Նիւթերը ներկայացնում են հիմնականում ժամանակագրական կարգով:

Անմիջական արձագանքներ

Հայոց ցեղասպանութիւնը յիշատակել ու ամրագրել է բազմաթիւ փաստաթղթերում: Այսպէս, 1915 թ. մայիսի 24-ի Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի համատեղ հռչակարգում արձա-նագրում է, որ ապրիլի կէսերին մի շարք բնակա-վայրերում կոտորածներ են տեղի ունեցել, իսկ Օսմանեան կայսրութեան կառավարութիւնը մի շարք քայլեր է ձեռնարկել կայսրութեան հայ բնակչութեան դէմ: Հաշի առնելով մարդկութեան եւ քաղաքա-կրթութեան դէմ Թուրքիայի հանցագործութիւնները, Եռեակ միութեան կառավարութիւնները յայտարարում են Թուրքիայի ղեկավարութեանը, բոլոր հանցա-գործութիւնների համար պատասխանատու են Օսման կայսրութեան կառավարութեան բոլոր անդամները եւ բոլոր նրանց ներկայացուցիչները, որոնք անմիջա-կանօրէն մասնակցել են այդ ջարդերին:

1915 թ. փետրարի 9-ին ԱՄՆ Սենատը բանա-ձեւ է ընդունել, որում, հաշի առնելով, որ պատերազմի մէջ ներգրուած երկրներում մի քանի հարիւր հազար հայեր պարէնի, կացարանի եւ հագուստի կարիք ունեն, կոչ է անում ԱՄՆ նախագահին մէկ օր յայտարարել, երբ ԱՄՆ քաղաքացիները կարող են իրենց համակրանքն արտայայտել եւ մարտնչող երկրներում հայերին օգնելու համար միջոցներ տրամադրել: Բանաձեւի մէջ նշում է, որ հայերի մեծ մասը մարտական

գործողութիւնների պատճառով հարկադրուած էր թողնել տները, հնարաւորութիւն չունի պարէն եւ տարրական կարիքների բաւարարման համար այլ անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերել, նշում է սովի, հիւանդութիւնների մասին:

1920 թ. մայիսի 11-ին ԱՄՆ –ի Սենատը, ճանաչելով Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, նշում է, որ «հստակ վեր է անկախութիւնը հայ ժողովրդի դէմ իրագործուած զանգածալին կոտորածի եւ այլ հանցագործութիւնների վերաբերեալ»:

Պաշտօնական ճանաչումներ

❖ Ուրուգայի Արեւելեան Հանրապետութեան Սենատի եւ Ներկայացուցիչների միացեալ գլխաւոր ասամբլեայում 1965 թ. ապրիլի 20-ին ընդունել է «Հայ նահատակների յիշատակի օրու մասին» օրէնք:

❖ 1982 թ. ապրիլի 29-ին Կիպրոսի Ներկա-յացուցիչների պալատը 1915 թ. հայերի ցեղա-սպանութեան տարեկիցի կապակցութեամբ դատա-պարտում է այն ժամանակաւայ թուրքական ռեժիմի կազմակերպած ցեղասպանութիւնը՝ որակելով որպէս հայ ժողովրդի դէմ հանցագործութիւն, եւ պաշտ-պանում է հայ ժողովրդի խախտուած իրաւունքների լրի վերականգնումը:

❖ 1987 թ. յունիսի 18-ին ընդունուած իր բանաձեւում Եւրախորհրդարանը ճանաչել է 1915-17 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան, փաստը եւ Եւրոպայի խորհրդից պահանջել ճնշում գործադրել Թուրքիայի կառավարութեան վրայ՝ 1915-17 թթ. հայերի ցեղասպանութիւնը ճանաչելու նպատակով: Խորհրդարանն ընդունում է, որ ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատուութիւն կրել Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ հանցա-գործութիւնների համար: Ուստի ընդգծում է, որ ցեղասպանութեան փաստի ճանաչման հետեւանքով չեն կարող բխել ներկայիս Թուրքիային ուղղուած ոչ քաղաքական, ոչ իրաւական եւ ոչ էլ նիւթական հարակցութիւններ:

❖ Ռդ Պետդոման 1995 թ. ապրիլի 14-ին ընդունել է 1915-22 թթ. հայ ժողովրդի ցեղասպանութիւնը դատա-պարտող յայտարարութիւն, որում դատապարտելով 1915-22 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքն է յայտնել հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը համարել եղեռնի զոհերի յիշատակի օր:

❖ Կանադայի խորհրդարանի համայնքների պա-լատը 1996 թ. բանաձեւ է ընդունել, որում արձանա-գրում է 1915 թ. ապրիլի 24 տեղ գտած մէկուկէս միլի-ոն մարդկանց սպանութիւնը:

❖ 1996 թ. ապրիլի 25-ին Յունաստանի Հանրա-պետութեան խորհրդարանը որոշում է կայացրել ապրիլի 24-ը համարել «Թուրքիայի կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»,

❖ 1997 թ. ապրիլի 3-ին Լիբանանի Հանրա-պետութեան Ազգային ժողովն ընդունել է բանաձեւ, որով ապրիլի 24-ը հռչակել է «Հայ ժողովրդի դէմ գործադրուած ջարդերի արհաւիրքի յիշատակի օր»: Բանաձեւը լիբանանցի ժողովրդին՝ ապրիլի 24-ը հայ ժողովրդի հետ միասնականութեան օր յայտարարելու կոչ է ուղղում: Իսկ 2000 թ. մայիսի 11-ին Լիբանանի խորհրդարանը

միաձայն ընդունել է հետեւեալ բանաձեւը «Լիբանանի խորհրդարանը 1915 թ. իրականացած հայերի ցեղասպանութեան 85- ամեակի առիթով ճանաչում եւ դատապարտում է օսմանեան իշխանութիւնների կողմից մէկուկէս միլիոն հայերի նկատմամբ իրագործւած ցեղասպանութիւնը: Խորհրդարանն իր լիակատար աջակցութիւնն է յայտնում հայ քաղաքացիների պահանջատիրութեանը եւ գտնում է, որ հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչումը կենսական պայման է՝ ապագայում մամօրինակ ոճիրների կանխարգելման համար»:

⊛ Աւտրալիայի նոր Հարաւային Ռելիս նահանգի խորհրդարանը 1997 թ. ապրիլի 17-ին ընդունել է բանաձեւ, որում ընդառաջելով տեղի հայ համայնքի ցանկութիւններին, դատապարտել է Օսմանեան կայսրութեան տարածքում կատարւած ոսնձգութիւնները՝ որակելով դրանք որպէս 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւն, ապրիլի 24-ը յայտարարել է հայ գոհերի յիշատակի օր եւ հայերի ցեղասպանութիւնը պաշտօնապէս դատապարտելու կոչ է արել Աւտրալիայի կառավարութեանը:

⊛ 1998 թ. մարտին Բելգիայի Սենատը ընդունել է բանաձեւ 1915 թ. Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան իրականացումը ճանաչելու մասին, խնդրելով Թուրքիայի կառավարութեանը նոյնպէս ճանաչել այն:

⊛ Ամերիկեան 10 նահանգներ՝ Կոնեկտիկուտ, Միչիգան, Նիւ Ջերսի, Վիրջինիա, Հիւսիսային Կարոլինա, Նիւ Եորք, Մասաչուսեթս, Կալիֆորնիա, Ջորջիա, Հարաւային Կարոլինա, ճանաչել են Հայոց մեծ եղեռնը:

⊛ 1993 թ. մայիսի 5-ին Արգենտինայի Սենատը բանաձեւ է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնում հայ համայնքին, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան զոհ է դարձել, նորից նշում է մարդկութեան դէմ հանցագործութիւնների տարելիցը, որի զագաթնակէտը դարձաւ 1915-17 թթ. Թուրքիայի կառավարութեան կողմից կազմակերպւած 1.5 մլն հայերի սպանութիւնը:

⊛ Սենատը նաեւ իր խոր անհանգստութիւնն է յայտնել ԼՂԻՄ մեծամասնութեան դէմ մարդու իրաւունքների խախտումների կապակցութեամբ:

⊛ 1998 թ. ապրիլի 16-ին Բուենոս- Այրեսի օրենսդիր մարմինը հռչակագիր է ընդունել, որում իր համերաշխութիւնն է յայտնել արգենտինահայ համայնքին՝ Օսմանեան կայսրութեան կողմից իրականացւած 1,5 մլն-ից աւելի հայերի ցեղասպանութեան 1998 թ. ապրիլի 24-ին նշող 83-ամեայ տարելիցի առթիւ: 1998 թ. ապրիլի 22-ին Արգենտինայի Սենատն ընդունել է մի յայտարարութիւն, որով դատապարտում է բոլոր տեսակի ցեղասպանութիւնները՝ որպէս մարդկութեան դէմ գործւած ոճիրներ: Նոյն յայտարարութեան մէջ Սենատն իր համերաշխութիւնն է արտայայտում նախապաշարումների եւ անհանդուրժողականութեան զոհ դարձած բոլոր ազգային փոքրամասնութիւններին, յատկապէս ընդգծելով իր մտահոգութիւնը դեռեւս անպատիժ մնացած ոճիրների վերաբերեալ:

⊛ Իտալիայի 35 սուբյեկտներ (քաղաքներ, նահանգներ, շրջաններ) արդէն պաշտօնապէս ընդունել են

Հայոց ցեղասպանութիւնը: Նախատեսւում է, որ Հռոմի նահանգային խորհուրդը նոյնպէս առաջի-կայում կընդունի համապատասխան օրէնք:

⊛ Քրդական վտարանդի պաշտամենտը, որը գտնուում է Բրիւսելում, հռչակագիր է ընդունել հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու մասին:

⊛ 2000թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի սենատը 164 կողմ, 40 դէմ, և 4 ձեռնպահ քվեներով ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

⊛ 2000թ. նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանը գերակշիռ մեծամասնութեամբ ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

Յայտարարութիւններ ցեղասպանութեան համատեքում ու ցեղասպանութեան շուրջ

Հայոց ցեղասպանութեան խնդիրն իր տեղն է գտել նաեւ 1948 թ. մայիսի 28-ի ՄԱԿ-ի զինորական հանցագործութիւնների հարցերով յանձնաժողովի, ինչպէս նաեւ 1985 թ. յուլիսի 2-ի խորականութեան կանխման եւ ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութեան հարցերով ՄԱԿ-ի ենթայանձնաժողովի զեկուցումներում: Մասնատրապէս, վերջին զեկուցման 13-րդ կէտը վերաբերում էր Օսմանեան Թուրքիայում հայերի իրաւունքների խախտումներին: 1983 թ. յուլիսի 24-ից մինչեւ օգոստոսի 10-ը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 6-րդ ասամբլեայի ընթացքում հրապարակւած պաշտօնական զեկուցում նշում է, որ Թուրքիայում մէկուկէս միլիոն հայերի ողբերգական բնաջնջման, ինչպէս նաեւ իրենց պատմական հայրենիքից կէս միլիոն հայերի տեղահանութեան շուրջ համաշխարհային հանրութեան լռութիւնը պայմաններ է ստեղծում պատմական փաստերի խկութիւնը հերքելու, համար, ինչը հանգեցնում է հայ ժողովրդի, հայոց եկեղեցիների եւ շատ այլ կազմակերպութիւնների յարաճուն դժգոհութեանը: Հայոց ցեղասպանութեան խնդիրը 1997 թ. յունիսի 13-ին քննել է նաեւ Յեղասպանութեան ուսումնասիրութեան ընկերակցութիւնը, ըստ որի գնահատման, 1915 թ. ցեղասպանութիւնը համապատասխանում է Յեղասպանութեան կանխարգելման եւ պատժման ՄԱԿ-ի կոնւենցիայի չափանիշներին:

1975 թ. ապրիլի 8-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը բանաձեւ է ընդունել, ըստ որի նոյն թականի ապրիլի 24-ը յայտարարել է մարդու նկատմամբ մարդու անմարդկային վերաբերմունքի յիշատակի համազգային օր, եւ դիմել է ԱՄՆ նախագահին յայտարարութեամբ հանդէս գալու կոչով, որում վերջինս կը յորդորի այդ օրն ընկալել իբրեւ ցեղասպանութեան բոլոր գոհերի, մասնատրապէս, 1915 թ. ցեղասպանութեանը ենթարկւած հայերի յիշատակի օր:

1984 թ. սեպտեմբերի 10-ին Ներկայացուցիչների պալատը 1985 թ. ապրիլի 24-ը մարդու նկատմամբ

մարդու անմարդկային վերաբերմունքի յիշատակի համազգային օր յայտարարելու մասին բանաձեւ է ընդունել՝ ի յիշատակի 1915- 23 թթ. Թուրքիայում իրականացած ցեղասպանութեան զոհ դարձած մեկուկէս միլիոն հայերի:

1996 թ. յունիսի 11-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը օրէնք է ընդունել ԱՄՆ արտաքին Ֆինանսատրման մասին, որի 547 կէտը սահմանափակումներ է վերապահում Թուրքիային յատկացուող օգնութեան վրայ «22 միլիոն ոչ աւելի արտաքին Ֆինանսատրման Ֆոնդի միջոցներից հասանելի կը լինեն Թուրքիայի կառավարութեան համար բացառութեամբ այն դէպքերի, երբ Ֆեդերալ ղեկավարութիւնը կոնկրետ որոշում կընդունի կամ այն դէպքում, եթէ Թուրքիայի կառավարութիւնը, միանալով ԱՄՆ-ին, կը ճանաչի 1915-23 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայերի դէմ կատարած հանցագործութիւնները, բոլոր անհրաժեշտ քայլերը կը ձեռնարկի հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու ուղղութեամբ»:

1996 թ. ապրիլի 23-ին Կանադայի համայնքների պալատը բանաձեւ է ընդունել հայ ժողովրդի ողբերգութեան 81-րդ տարելիցի առթիւ, ըստ որի ապրիլի 20-27-ը յայտարարել եւ այսուհետ նշելու է որպէս մարդկանց հանդէպ անմարդկային վերաբերմունքի յիշատակի շաբաթ:

Երախտորհրդի խորհրդարանական վեհաժողովի 51 անդամներ 1998 թ. ապրիլի 24-ին, արտայայտելով իրենց անձնական կարծիքը, ընդունել են գրատոր հռչակագիր, որում նշում է, որ 1915 թ. ապրիլի 24-ը սկիզբը դրեց Օսմանեան կայսրութիւնում հայերի ոչնչացման պլանի իրագործմանը: Հռչակագրով նշում է 20-րդ դարի առաջին ցեղասպանութեան տարելիցը, որով տուրք է մատուցում ընդդէմ այս հանցագործութեան հայ զոհերի յիշատակին: Հարկ է նշել, որ հռչակագիրը ստորագրողների թում է Եւ իւՎ մերկայիս նախագահ լորդ Ռասել Չոնսթոնը:

Ըստ մամուլի լուրերի, Քենթրբերիի արքեպիսկոպոսը Կիլիկոյ կաթողիկոս Արամ Ա-ի երաշխավորութեամբ մտադիր է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատին օրինագիծ ներկայացնել ցեղասպանութեան ճանաչման մասին: Լորդերի պալատի 400 անդամներից 25-ը եպիսկոպոսներ են:

Հայոց ցեղասպանութեան խնդիրն իր տեղն է գտել ամերիկեան պրեզիդենտների ամենամեայ ելոյթներում. Ռոնալդ Ռեյգանը 1981 թ. ապրիլի 22-ին նշել է, որ թէ՛ աւելի վաղ տեղի ունեցած Հայոց ցեղասպանութիւնը, թէ՛ ցեղասպանութիւնը Կամբոջեայում, ինչպէս նաեւ Հոլոքոսթի դասերը երբեք չպէտք է մոռացնեն: 1978 թ. մայիսի 16-ին ԱՄՆ-ի հայերի պատին տրած ընդունելութեան ժամանակ ԱՄՆ նախագահ Ջիմի Քարտերը, նշելով, որ մինչեւ 1916 թականը կոնկրետ քայլեր էին ձեռնարկում հայ ժողովրդին ոչնչացնելու ուղղութեամբ, եւ որ այդ դէպքերը մեծագոյն ողբերգութիւններից են, ընդգծել է, որ այդ հարցով միւրմբերգեան դատավարութիւն չի

եղել: 1990 թ. ապրիլի 20-ին Ջորջ Բուշը նշել է, որ հայ ժողովրդին վիճակել են բազմաթիւ ողբերգութիւններ, սակայն ամենից տխուր իրադարձութիւնը 1915-23 թթ. Օսմանեան կայսրութեան ղեկավարութեան կազմակերպած սարսափելի կոտորածն էր: 1994- 2000 թթ. նախագահները ամէն տարի յայտարարութիւններ են արել ապրիլի 24-ի կապակցութեամբ՝ ցեղասպանութիւնը բնորոշելով որպէս տեղահանութիւն եւ զանգաւածային ջարդեր:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը 1984 թ. յունւարի 6-ին Վիէն քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը յայտարարել է, որ հնարաւոր չէ պատկերացնել ցեղասպանութեան բոլոր սարսափները:

Ժողովուրդի մշտական տրիբունալը, քննելով Հայոց ցեղասպանութեան խնդիրը, 1984 թ. ապրիլի 16-ին դատավճիռ է կայացրել, որում մասնատրապէս նշում է, որ Թուրքիայի ոչ մի կառավարութիւն պատասխանատուութիւն չի ստանձնել 1915 թ. ցեղասպանական իրադարձութիւնների համար: Տրիբունալը պնդում է, որ ցեղասպանութեան մեղադրանքը հետագոտի եւ սպացուցելու դէպքում՝ ճանաչի համաշխարհային հանրութեան կողմից:

Ըստ տրիբունալի, 1915 թ. դէպքերը ցեղասպանութիւն որակւորմանն են համապատասխանում: Երիտթուրքերի կառավարութիւնը մեղաւոր է ցեղասպանութեան իրականացման համար: Հայերի ցեղասպանութիւնը ճանաչում է որպէս միջազգային հանցագործութիւն, որի համար պատասխանատուութիւն պէտք է կրի թուրքական պետութիւնը:

Մոնա Մաշտոբեան

Լոյս է տեսել ԱՊԱԳՎ Հանդէսի Համար 7-8-ը

Համար 7 - 8 (22 - 23) 2002 թ.

Վերջին տասնամեակում Հայաստան առաքլած սփիւռքի մարդասիրական օգնութիւնը

Պատրաստած էր Հայաստան-Սփիւռք
խորհրդածողովի համար
(22-23 սեպտեմբերի, 1999թ.)
ք. Երևան

Այս ուսումնասիրութեան մէջ առանձնապատու ուշադրութիւն է դարձել կրկնակի հաշւառումների յայտնաբերման վրայ, իսկ նշած տեւալները արտացոլում են իրաքանչիւր կազմակերպութեան ներդրումները, խուսափելով կրկնակի հաշւառումից, համենայն դէպս խոշոր ծրագրերի պարագայում:

Գծարութիւններ. ակներեւորէն տեւալ զեկոյցում նշած բոլոր կազմակերպութիւններն արձանագրել են Հայաստանին օգնութիւն տրամադրելու հարցում ներքին եւ վարչական դժարութիւններ: «Հայաստանում աշխատելը հեշտ գործ չէ: Ամէն օր դու փորձում ես քո համբերութիւնը»,- ակնարկել է մի պաշտօնեայ: Իրաքանչիւր կազմակերպութիւն հանդիպել է ոչ անհրաժեշտ ուշացումների եւ բիրտկրատական քաշքշուկների, որոնք յարուցում են օգուտ ակնկալող մաքսատան աշխատակիցների եւ ապակազմակերպւած (ու կաշառած) քաղաքացիական ծառայողների կողմից:

Պէտք է նշել, որ նկատուած է օղանասկայանի անձնակազմի կողմից կաշառք վերցնելու երեւոյթի մեծ անկում, ինչն անպայման չէ, որ կապուած լինի անձնակազմի փոփոխութեան հետ, այլ նաեւ փաստի, որ սփիւռքի կազմակերպութիւնները տարիներ շարունակ հրաժարել են որեւէ մէկին կաշառք տալուց եւ վստահօրէն պնդել են քարոյականութեան համապատասխան չափանիշի վրայ: Վերջին տասնամեակի ընթացքում օգնութեան հետ կապուած հարցերում նկատուած է կառավարութեան վերաբերմունքի բարելաւում: Սակայն, այդ «բարելաւումը» օգնութիւն ցուցաբերող կազմակերպութիւնների աշխատանքի ուժեղացման փոխարէն, աւելացել է բիրտկրատիան: Օրինակ, վերջին տորիներին, ինչպէս բողոքել են մի քանի կազմակերպութիւններ, մարդասիրական օգնութիւնը օրանասկայանից բերելը աւելի շատ ժամանակ է խլում՝ տարբեր պետական ատեսաններից փաստաթղթեր հայթայթելու պատճառով:

Օգնութիւն, թէ զարգացում. Օգնութիւն ցուցաբերող սփիւռքի կազմակերպութիւնների միջեւ գոյութիւն ունի անհամաձայնութիւն՝ պէտք է արդեօք աշակցութեան ջանքերի ուղղաձորիւնը փոխել օգնութիւնից դէպի զարգացում: Չնայած վերջին տարիներին կայ աճող միտում դէպի զարգացում, որոշ կազմակերպութիւններ հաւատացած են, որ Հայաստանի բնակչութիւնը դեռեւս ունի օգնութեան կարիք՝ առնուազն եւս մէկ տասնամեակ, եթէ ոչ աւել: Նրանք վիճում են, որ աւելի երկարաժամկէտ զարգացման ծրագրերում ներգրաւելու փոխարէն պէտք է շարունակել մարդասիրական օգնութիւնը: Մարդասիրական օգնութիւնից զարգացման ծրագրերին անցումը

անհրաժեշտ է իրականացնել աստիճանաբար եւ դանդաղ քայլերով: Օրինակ՝ ըստ կառավարութեան տեւալերի, Հայաստանում կան դեռեւս 230 000 առաւել խոցելի տնտեսական վիճակում գտնուող ընտանիքներ, որոնք ստանում են ընտանեկան նպաստներ: Դա կազմում է Հայաստանում պաշտօնապէս գրանցուած 812000 ընտանիքների 26%-ը:

Նփրատումների գործունէութեան նազուճը. Փաստօրէն սփիւռքահայ բոլոր համայնքներում առկայ է բարեգործական գործունէութեան անկում: Ինչպէս երեւում է հայկական կազմակերպութիւններին փոխանցած ոչ-հայկական նփրատութիւնների մեծ տոկոսից (երբեմն նոյնիսկ մինչեւ 90%), տարիների ընթացքում սփիւռքի կազմակերպութիւնների կողմից յատկացուող ներդրումները աստիճանաբար նազել են, աւելի յաճախ տեղ տալով խոշոր անձնական նփրատութիւններին: Օրինակ՝ զեկոյցում նշած երեք ամենախոշոր ԱՄՆ հայկական կազմակերպութիւնների տարեկան նփրատումների միջին քանակը 7000 մարդ է (միջինը՝ \$100 նփրատութեամբ): Բոլոր կազմակերպութիւններն էլ ընդունում են, որ իրենց համայնքներն աւելի լայն հնարաւորութիւններ ունեն, սակայն բաւական ներդրում չեն կատարել եւ հակաւած են աւելի ու աւելի քիչ ներդնելու: Հարկ է նշել, որ բազմաթիւ սփիւռքահայեր օգնութիւն են ուղարկում Հայաստան անձնական ուղիների միջոցով՝ ուղիղ կամ անուղղակի ձեւով, կամ փոքր խմբերի միջոցով, կամ մէկ անգամեայ ծրագրերի համար:

Մի պաշտօնեայ ակնարկել է. «Եթէ մարդիկ վստահում են, նրանք աւելի շատ եւ յաճախ են կատարում նփրատութիւն, պէտք է լինել անկեղծ, հաշիտու, պէտք է ճշմարտօրէն զեկուցել, գործողութիւններում պահպանել ազնութիւն եւ անձնական հարաբերութիւններ ձեռք բերել ձեր նփրատումների հետ»:

5. Առաջարկութիւններ Կարիքների գնահատում

Վերջին տասնամեակի ընթացքում սփիւռքի իրաքանչիւր կազմակերպութիւն մշակել է իր առանձին մեթոդաբանութիւնը Հայաստանի մարդասիրական կարիքների գնահատման հարցում: Երբեմն նրանք արձագանքել են կառավարութեան եւ հաստատութիւնների խնդրանքին, երբեմն՝ կատարել են սեփական գնահատումներ իրենց ներքին օղակների միջոցով, երբեմն էլ «ընտրութիւն» կատարել ծրագրերից: Ի տարբերութիւն հաստատուած մախագծի- օր. առողջապահութեան բնագաւառում- օգնութիւնը հիմնականում պայմանաւորուած է կազմակերպութեան քանակի չափերով: Լաւ ծրագրաւորուած եւ համապարփակ կարիքների գնահատման մեխանիզմը աւելի արդիւնաւետ կարող է ծառայել Հայաստանի մարդասիրական կարիքներին եւ կը խուսափի ջանքերի կրկնապատկումից եւ ամենակարեւորը՝ տեղի չի ունենայ օգնութեան բաշխում ժողովրդի բոլոր խաւերի միջեւ, այլ միայն ամենակարիքաւորի: Օրինակ՝ Հայաստանի հիւսիսային մասի բնակչութիւնը, մասնաւորապէս երկրաշարժի գօտում բնակւողները, ապրում են աւելի արքատ պայմաններում, քան երկրի այլ մասերում: Այն մարդիկ, որոնք չեն ստացել անհրաժեշտ կրթութիւն, ինչպէս նաեւ

ԹՅ ՈՒ ՆՅ ԸՅ

թոշակառուները եւ հաշմանդամները նոյնպէս աւելի խոցելի են:

Անկախացումից հետո Հայաստանին ՀԲԸՄ-ի հատկացումները՝ շուրջ 50 մլն դոլար

Լուսիկ Մանուկյան - Արմենի Նախագահութան 14 դասփնէրը

Յանկանալով, որ ազգի պարծանքը հանդիսացող Միությունը վերանորոգված առաջնորդությամբ «հայ կեանքի 21երդ դարու պարտատրոփիւնները» դիմագրավի գիտակից արիւթյամբ, 1989 թվի օգոստոսի 26-ի նամակով ՀԲԸՄ-ի ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանն այդ օրն իր նախագահութեան ներքո գումարվող կենտրոնական վարչութեան ժողովին է ներկայացնում իր հրաժարականը՝ պատճառաբանելով առաջացած տարիքը: Նույն նիստի ընթացքում ժողովը միաձայնությամբ «Պատվակալ ցկյանս նախագահ» է ընտրում պրն Մանուկյանին որպէս երախտագիտություն Բարեգործականի պատմութեան մեջ 37 տարիների նախագահական պատկառելի վաստակի, հեռատես եւ իմաստուն ղեկավարութեան համար, որը նրան արդարացիորեն արժանացրել էր ժողովրդի արդի ժամանակների մեծագույն բարերարի կոչումին: Այս ժողովը դարձյալ միաձայնությամբ ատենապետ եւ հետեւաբար ՀԲԸՄ-ի 6երդ նախագահ է ընտրում Լուիզ Մանուկյան-Սիմոնին, որն արդեն 1987-ից վարում էր Միութեան գործադիր փոխնախագահի պաշտոնը: Նա բազմիցս ընկերակցել էր Միութեան աշխարհատարած շրջանակները կատարած հոր այցելութիւններին, միշտ իր կարեւոր ներդրումը բերելով համայնքների կարիքների ուսումնասիրութեան եւ դրանց լուծումների որոնման բնագավառներում: Սակայն առջեւում նոր դարաշրջան էր:

Հայաստանի անկախացման գործընթացը, Սպիտակի աղետալի երկրաշարժը եւ Արցախի ազատագրական պայքարը նոր, շրջադարձային էջեր էին բացել մեր պատմութեան մեջ եւ նոր պահանջներ ու հրամայականներ դրել ինչպէս ընդհանրապէս սփյուռքի, այնպէս էլ մասնավորապէս Բարեգործականի առաջ:

Երկրաշարժից չորս օր անց՝ կիրակի, ղեկտեմբերի 11-ի վաղ առավոտյան Երեւան հասնելով, տիկին Մանուկյան-Սիմոնը ակնատես էր լինում արհավիրքի սարսափելի տարողութեան ու ձեռնամուխ լինում անմիջական սփոփիչ միջոցների: Նրա նախաձեռնությամբ «գորակոչի» են ենթարկվում աշխարհով մեկ ցրված Բարեգործականի գրասենյակները, եւ հավաքված մեծամասշտաբ գումարները հատկացվում են աղետյալներին:

Չանտեսելով սփյուռքի կարիքները, Միութեան ղեկավարութեանը դրանից հետո կանոնավորապէս իր ուշադրութեանը կենտրոնացնում է Հայաստանի վրա, այն հաստատ համոզումով, որ հայրենիքում իրականացածը մնայուն է եւ որ առանց հզոր հայրենիքի չի կարող լինել նաեւ հզոր սփյուռք:

Առաջին անգամ 1994 թ. հոկտեմբերին ՀԲԸ Միութեանն իր ընդհանուր ժողովը գումարում է Երեւանում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում: Իր գեկույցում նախագահ Լուիզ Սիմոնը հայտարարում է. «Անկախութիւնից սկսած մեր աշխատանքի ընթացքը Հայաստանում փոփոխութեան է ենթարկվել: Այժմ մենք կարող ենք, ինչպէս աշխարհի այլ երկրներում, նախատեսել եւ գործի դնել երկարաժամկետ ծրագրեր՝ հօգուտ մեր ժողովրդի: Սեր նպատակն այստեղ ոչ թէ հայերենի ուսուցումն է կամ

ազգային ժառանգութեան խթանումը, այլ նոր ուղղութիւններ եւ տեխնոլոգիական արդի սարքավորումներ առաջարկելով երկրի ժողովրդավարութեան եւ արդիականացման գործընթացները խրախուսելը»:

Հավատարիմ մնալով իր սկզբունքներին, 1996 թ. Լոս Անջելեսում կայացած Միութեան 79երդ ընդհանուր ժողովում նա դարձյալ հստակորեն ձեւակերպում է «մեկ ազգ, մեկ միացյալ ճակատ՝ հանուն հայոց ընդհանուր ապագայի» տեսակետը: Հայաստան կատարած նրա հաճախակի այցելութիւնները, երբեմն նաեւ ընկերակցությամբ Միութեան ներկայացուցիչների, մեծ խանդավառություն են առաջացնում հատկապէս նվիրատուների շրջանում, որոնց թիվն օրեցօր ավելանում է: Այցելութիւնները շարունակվում են նաեւ այլ զաղթօջախներ՝ մոտիկից ծանոթանալու արդի ժամանակների հետ առնչվող կազմակերպչական, վարչական, մշակութային, դաստիարակչական եւ երիտասարդական բազմաթիւ ծրագրերին ու խնդիրներին:

Այսպէս, միայն վերջին տասնամյակում տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնի նախագահութեան օրոք, ՀԲԸ Միութեան նախաձեռնությամբ սփյուռքում կառուցվել են կամ վերակառուցվել է սփյուռքահայութեանը տրամադրվել .

- ՀԲԸՄ-ի Մեյգոնյան կրթական հաստատութեան համալիրը Նիկոսիայում եւ Միութեան մասնաճյուղի կենտրոնը նույն քաղաքում:
- ՀԲԸՄ Հայ երիտասարդաց ընկերութեան Ալեք Մանուկյան համալիրը Փասադենայում (Կալիֆոռնիա):
- ՀԲԸՄ-ի Սարգիս եւ Սեդա Տեմիրճյան երկրորդական (միջնակարգ) վարժարանը Կանոգա Փարքում (Կալիֆոռնիա):
- ՀԲԸՄ-ի Մանուկյան նախակրթարանի բաժնի ութ նորակառույց դասարանները դարձյալ Կանոգա Փարքում (Կալիֆոռնիա):
- ՀԲԸՄ-ի «Տեմիրճյան կենտրոնը» Անթիլիասում (Լիբանան):
- ՀԲԸՄ-ի «Նազարյան կենտրոնը» Կանոգա Փարքում (Կալիֆոռնիա):
- ՀԲԸՄ-ի «Նուբար Նազարյան շենքը» Բեյրութում (Լիբանան):
- ՀԲԸՄ-ի «Արարատ» մշակութային եւ մարզական կենտրոնը Աթենքում (Հունաստան):
- ՀԲԸՄ-ի Քեսաբի (Սիրիա) ճամբարի նոր հողաշերտը եւ բարեգարդումը:
- ՀԲԸՄ-ի Հալեպի (Սիրիա) Լազար Նաճարյան-Գարուստ Գոյլբենկյան վարժարանի վեց հարկանի հարակից շենքը:
- ՀԲԸՄ-ի Հալեպի վերանորոգված «Նազարյան» հանդիսասրահը, Լաթաքիայի կենտրոնը, ինչպէս նաեւ Դամիշիկի եւ Դամասկոսի «Յագության» նոր կենտրոնները:
- ՀԲԸՄ-ի նոր կենտրոնը Նիսում (Ֆրանսիա):
- ՀԲԸՄ-ի սեփական կենտրոնատեղին Նյու Յորքում (ԱՄՆ):
- ՀԲԸՄ-ի «Նուբար ճամբարի» (Նյու Յորք) Մանուկյան, Նազարյան, Սեդրակյան, Մարգարյան եւ Պալյան նոր հավելումները:
- ՀԲԸՄ-ի Կորդոբայի (Արգենտինա) վերանորոգված կենտրոնն արգարանը:

Հայաստանում ծրագրեր են իրականացվել հետեւյալ հաստատութիւններում.

- Հայաստանի ամերիկյան համալսարան,
- Նորթի, Արաբկիրի եւ Մալաթիայի հայորդաց կենտրոններ.

- Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախումբ,
- Սբ. Էջմիածին եւ Արարատյան թեմ,
- Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճար,
- Նորքի սբ. Սարգիս եկեղեցի,
- Սեւանի Աստվածաբանական ընծայարան ու հանրակացարան,
- Երեւանի պետական համալսարան,
- Երեւանի, Սեւանի, Նորքի, Հրազդանի եւ Էջմիածնի ապուրի խոհանոցներ,
- վերականգնողական վիրաբուժության կենտրոն,
- գերձայնային ախտաճանաչման կենտրոն,
- Սաստենադարանի ձեռագրերի գրադարան,
- Գիտությունների ազգային ակադեմիա,
- Գյումրու սննդամթերքի սառցարան,
- Գյումրու երաժշտական եւ արվեստի կենտրոն,
- Արվեստի ազգային պատկերասրահ:

ՀԲԸ Միության հովանավորությամբ անցկացվել են բազմաթիվ երաժշտական մրցույթներ եւ թատերական ներկայացումներ:

Տեխնոլոգիայի եւ հաղորդակցության միջոցների ընձեռած լայն հնարավորությունների խոր հավատավորը լինելով, նախագահուհին ժամանակին մտահղացել է հրատարակել անգլիատառ «AGBU News Magazine» պարբերականը, որի յուրաքանչյուր համարը նվիրված է հայկական մեկ գաղթօջախի ինչպես պատմական անցյալին, այնպես էլ ներկա կյանքին, երեւելի անձնավորություններին եւ նրանց ակնառու գործունեությանը: Պարբերականը, որն ավելի քան 85.000 հասցեներով ձրի առաքվում է աշխարհի չորս ծագերը, այնքան մեծ հաջողություն է արձանագրել նյութերի մատուցման իր որակով եւ բովանդակությամբ, որ Ֆրանսիայի եւ Հարավային Ամերիկայի բարեգործականի շրջանակները եւս 1999 թ. մարտից սկսել են հրատարակել իրենց բարձրորակ եռամսյաները՝ «UGAB Magazine»-ը ֆրանսերենով եւ «Generacion 3»-ը իսպաներենով: Սրանց նպատակն է Միության բազմակողմանի գործունեությունը տեսանելի դարձնել հատկապես աշխարհում սփռված ծագումով հայ, սակայն օտարալեզու զանգվածին, որ պայմանների բերումով հեռացել է հայկական շրջանակից, բայց կապը չի խզել իր արմատների հետ: Խստապահանջ նախագահուհին ամենայն բժախնդրությամբ միշտ հետեւել է ծրագրերի կատարմանը եւ նույնպիսի պատասխանատվություն ակնկալել իր բոլոր գործակիցներից:

Քաջ գիտակցելով երիտասարդ սերնդի ներուժը, Միությունն իր նպատակասլաց գործունեությունը գլխավորապես կենտրոնացրել է երիտասարդ տաղանդների հայտնաբերման եւ քաջալերման գործին: Իրականացվել են երիտասարդական հավաքներ, Նավասարդյան խաղեր, գրական, մշակութային ձեռնարկներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում ստեղծվել են «Երիտասարդ արհեստավարժների» խմբեր Լոս Անջելեսում, Ֆրեզնոյում, Դետրոյթում, Սան Ֆրանցիսկոյում, Նյու Յորքում եւ Եվրոպական մի շարք քաղաքներում: Քսանմեկից քառասուն տարեկան այդ սերունդն իր նորարար գաղափարներով եւ աշխատանքով վստահաբար պիտի կարողանա Բարեգործականի դիմագիծը պատշաճեցնել նորօրյա պահանջներին եւ քայլել 21-րդ դարի հրամայականների հետ համաքայլ:

Ի տես բոլոր մարզերում արձանագրված հաջողությունների, Միության նվիրատուների թիվն զգալիորեն ավելացել է, նվիրատվությունների գումարն արձանագրել է նոր մրցանիշներ:

Հետադարձ մի ակնարկ 1989-1998 թթ. ֆինանսական տեղեկագրի թվերի վրա բավական է ցայտուն կերպով արձանագրելու նվաճումները: Ըստ ՀԲԸՄԻ «Յուշարար Միութին» պարբերականի 2000 թվականի հունիսյան համարի տվյալների, Միության ընդհանուր գույքն ավելացել է 100 մլն ամերիկյան դոլարով: Բյուջեն 17.201.034,46 հասել է 26.819.732 դոլարի: Նույն տասնամյակում որդեգրված ծրագրերի իրականացման համար ծախսվել է 226 մլն դոլար կամ միջին հաշվով տարեկան 22 մլն դոլար, որն ինքնին գերազանցում է 1906-1998-ի ընթացքում գոյացած ընդհանուր գույքի 213 մլն դոլարի գումարը: Վերոհիշյալ 226 մլն դոլարից 40 մլն դոլար հատկացվել է Հայաստանին անկախացումից հետո Միության ձեռնարկած ծրագրերի իրականացման համար:

Նվիրատվությունների տարեկան երամուտներից ստացված գումարներով պահպանվում են եւ ընդարձակվում ավելի քան 25 երկրներում մոտ 400 հազար հայերի սպասարկող մշակութային, կրթական, կրոնական եւ բարեգործական հաստատություններ: Ուսումնասիրելով 1910-2001 թթ. անհատական նվիրատվությունների ցանկը, որը հրատարակվել է AGBU համդեսի 2001 թ. դեկտեմբերյան համարում, կարելի է հաստատ արձանագրել հարատեւ աճ նվիրատվությունների քանակի: Ժամանակաշրջանը կարելի է բաժանել երեք հիմնական մասերի՝ ա) մինչեւ 1972 թ. նվիրատուների քանակը սկզբնական 1և2ևից հասել է 8և9ևի՝ հիմնականում Եգիպտոսից, ԱՄՆ-ից, Թուրքիայից, Ֆրանսիայից, Հունաստանից եւ Շվեյցարիայից, բ) 1973 և 1988 թթ. այդ թիվը 10ևից 17ևի է հասել՝ վերոհիշյալ երկրների թվին ավելացել են Լիբանանը, Իրանը, Անգլիան, Կիպրոսը եւ Մոնակոն, գ) 1989-ից նկատվում է քանակի կտրուկ աճ ընդհուպ նախկին թվի կրկնապատկում: Այս շրջանում նվիրատուները, չնչին բացառությամբ, Ամերիկայից են:

Բայց ներդրումները կարող էին ավելորդ մսխումների դուռ բացել, եթե, անուշտ, չլինեին դրամագլխի իմաստուն օգտագործումը եւ նպատակասլաց հատկացումները տարբեր համայնքների ամենամանրաժեշտ կարիքներին՝ լինեն մարդասիրական, մշակութային, կրթական թե երիտասարդական:

Վստահ ենք, այսուհետ եւս հավատարիմ իր որդեգրած անհակարկ ուղուն եւ նվիրատուների աճող թվով կենսանորոգ, ՀԲԸՄԻ շարունակելու է իր նշանակալից ավանդը բերել ազգասպասանման վսեմ գործին:

Պատրաստեց ՀԱԿՈՒ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Սկզբը էջ 11-ում

Իրական դաշտ.

Հայաստանի ղեկավարութիւնը պէտք է ստեղծի յստակ օրենքներ մարդասիրական օգնութեան իրակա-նացման վերաբերեալ եւ ճշգրիտ վարչական ընթացա-կարգ: Ներկայումս նկատուում է հետետողականութեան եւ ճիշտ օրենքների պակաս: Բոլոր կազմակերպու-թիւններն այն կարծիքի են, որ մարդասիրական օգնու-թիւնը պէտք է մաքսատուբերից ազատ իրականացուի, քանի որ դա վիստեցնում եւ խոչընդոտում է աջակցութեանն ուղղած ջանքերը:

Պարզ օրենքների, ընթացակարգի եւ մեթոդա-բանութեան ստեղծումը չպէտք է նշանակի բիւրոկրա-տիայի եւ թրթաբնութեան աճ: Ընթացակարգերը պէտք է լինեն գործնական, տրամաբանական եւ քիչ ժամանակ խլող: ■

Վերջ

Æñ³Ý³Ñ³Ù Ûß³İ áõÃ³ÛÝ-
 Ñ³è³ñ³İ³İ³Ý . Çi áõÃ»³Ý
 . áñĬ Çã
 Էղիկ Բաղդասարեանի՝
 Գերմանիկի
 . áñĬ áõÝ ; áõÃ»³Ý 20-³Ù»³Ù
 Էá»È»³ÝÁ

Ի նկատի ունենալով Իրանահայ մշակութային գործիչ և թերթիս արտոնատեր և զխաւոր խմբագիր Էղ. Բաղդասարեանի 20-ամեայ գործունէութիւնն ու նրա նոր գրքերի հրատարակումը, մի կարծ զրոյց ենք ունեցել նրա հետ, որը ստորև ներկայացնոււմ ենք.

ԽՆՑ.



Լոյս.- Կարելի է բացարտել երբ է՞ք սկսել գրել:


Է.Բ.- Առաջին անգամ գրել եմ մի իրական պատմածք, որս հին գիւղի յուշերից մէկի հիման վրայ, երբ տարրական 6-րդ դասարանում էի սովորում: Յիշում եմ, որ տարրական երրորդ դասարանի աշակերտ էի և ուսուցչուհին մի շարադրութիւն էր տւել մեր ապագայ երագած աշխատանքի մասին, ես էլ գրել էի, որ ուզում եմ գրող դառնալ: Այդ տարիներից սկսել եմ գրել, սակայն պատմագիտական և հայագիտական գործերը սկսել եմ շուրջ 25 տարի առաջ:

Լոյս.- Դուք ունեք բազմաթիւ աշխատութիւններ, որո՞նք են ձեր գործերի առանցքը:

Է.Բ.- Իմ իսկական նպատակն է եղել հայ մշակոյթը ճանաչեցնել իրանահայութեանն ու իրանցիներին, այդ իսկ պատճառով պարտաւոր եմ եղել համարեայ մշակութային բոլոր ճիւղերում աշխատել, եթէ պատրաստ աղբիւրներ գոյութիւն են ունեցել, ապա թարգմանել եմ դրանք, եթէ ոչ, ինքնուրոյն գործ եմ ներկայացրել: Այդ ամենով համղերձ իմ իսկական ցանկութիւնը կենտրոնանում է պատմական հարցերի մէջ, մասնաւորապէս իրանահայութեան պատմութիւնը գործերիս կենտրոնն է կազմում, որի համար շուրջ 30 տարի է, ինչ աղբիւրագիտական և հետազոտական աշխատանք եմ կատարում:

Լոյս.- Կը խնդրէիք ձեր աշխատութիւնների մասին աւելի շատ տեղեկացրէք մեզ:

Է.Բ.- Սիրով: Մինչև այսօր 72 հատոր հեղինակային և թարգմանական գրքեր եմ պատրաստել, որոնցից 39-ը հրատարակւել են՝ 33 հայագիտագան և 16 տեխնի-



կական՝ համակարգչային հարցերին առնչող գրքեր, ունեմ 33 գրքեր որոնք չեն հրատարակւել կամ մամուլի տակ են օրինակի համար «Հայկական մատենադպրարան» պատմութիւնը հնագոյն շրջանից մինչև մեր օրերը» ծաւալուն պարսկերէն աշխատանքը որը հրատարակւում է Իրանի Գիտութեան նախարարութեան միջոցով: Այս 33-ից 20-ը հայկական, իսկ 13-ը տեխնիկական հարցերի մասին են: Առաջին գիրքս՝ «Հայ ժողովրդի պատմութեան» երկու հատորները, տպագրւել են 1981թ. Թեհրանում և մի քանի անգամ վերահրատարակւել: Ունեմ 137 յօդաձ, որոնցից 96 հայագիտական՝ 91-ը հրատարակւած իսկ 5-ը դեռևս չեն հրատարակւել: Տեխնիկական յօդաձներիս թիւը հասնում է 41-ի, որոնք ամբողջապէս հրատարակւել են թէ՛ թղթի վրայ, թէ՛ էլէկտրոնային եղանակով Ինտերնետում: Բոլոր գործերիս ցանկը շուրջ 10 էջ է կազմում, ուստի ցասօք հնարաւոր չէ մէկ առ մէկ ներկայցնել դրանք, սակայն դրանցից շատերը արդէն ժողովրդի սեփականութիւնն են դարձել: Ունեցել եմ մի քանի տասնեակ հարցազրոյցներ իրանահայ, պարսկական, հայաստանեան և միջազգային լրատամիջոցների՝ մամուլի, ռադիոյի և հեռուստատեսութեան հետ, մասնակցել կամ կազմակերպել եմ բազմաթիվ սեմինարներ, որոնց ընթացքում ներկայացրել եմ հայ մշակոյթը, գիտութիւնը, և տեխնիկական ընդհանուր հարցեր: Նշւած գործերը հայերէն, պարսկերէն և անգլերէն լեզուներով են:

Լոյս.- 1995 թւականից աշխատում եք թերթի հրատարակմանը, եթէ կարելի է այս գործի դրդապատճառների մասին բացատրէիք:

Է.Բ.- Թերթի հրատարակման իլծը ունեցել եմ դեռևս Իրանի յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, անգամներ փորձեր եմ կատարել համախոհ ընկերների հետ, սակայն դա յաջողեց 1995 թ. «Ապագա» ամսագրի հրատարակմամբ, այպ «Լոյս»-ը և «Ապագա» եռամսեայ հանդէսը: Իրանահայ ներկայ մամուլը ունենալով կուսակցական պատկանելութիւն, պարզապէս չէր կարող ամբողջ համայնքի ցանկութիւնները ներկայացնել, նրանց կողմից ակնաթող են եղել բոլոր նրանք, ովքեր գաղափարական պատկանելութիւն չեն ունեցել այդ կուսակցութեանն ու խմբերին և այդպիսի անհատները զգալի թիւ են կազմում: Մենք ցանկացել ենք ունենալ անկախ մամուլ, այն իմաստով, որ մեր համայնքի բոլոր



անդամներին անկախ նրանց հասարակական հայացքներից, հնարաւորութիւն տրւի արտայայտել իրենց տեսակէտները, յուզումներն ու ապրումները, հասարակական և մշակութային արժանիքները: Որպէս օրինակ ասեմ, որ մեր 70-ամեայ միակ օրաթերթը մինչև օրս մի բառ չի անդրադարձել իմ և շատերի մշակութային և գիտական գործերի մասին: Մենք մեր մամուլում աշխատում ենք ըստ մեր սահմանափակ հնարաւորութիւնների, լրացնել այդ բացը :Որևէ թերթ իրատւոյն չունի սևացնելու համայնքի ընդհանուր պատկերը, խեղաթիւրել իրականութիւնները:

Լոյս.- Յօդածների տպագրութեան համար ինչ չափանիշներ էք նկատի առնում:

Է.Բ.- Յօդածները պիտի մշակութային և հասարակական իմաստ ներառեն: Բոլոր այն դպիսիները հրատարակուում են , եթէ չընդգրկեն զրպարտանք , հայհոյանք ու չհակասեն ազգային շահերին և Իրանի օրէնքներին:

Լոյս.-Ձեր նոր հրատարակած գրքերի մասին տեղեկացրէք:

Է.Բ.- Պարսկերէնով՝ «Հայ եկեղեցու պատմութիւնը» նւիրած Հայաստանում քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին, Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» գիտական թարգմանութիւնը՝ առաջաբանով և



Լոյս.- Ձեր կարծիքով իրանահայ համայնքի մշակութային եւ հասարակական մակարդակը ինչպիսի՞ն է:

Է.Բ. – Յաւօք մեր համայնքը, ելնելով Իրանի ընդհանուր մշակութային պայմաններից և մեր համայնքային ներքին բարոյութիւններից, շատ քիչ է առաջադիմել, և ժամանակի ընթացքում անընդհատ վայրէջք է ապրել: Դպրոցների անփառունակ վիճակը, «ազգային» կոչող իշխանութիւնների և նրանց կողմից հովանաւորող միութիւնների կարծրամտութիւնն ու թունաւոր մօտեցումները հասարակական հարցերի նկատմամբ, մշակութային միութիւնների կրատրական վիճակը, անգործունեայ անձանց պարծենկոտ ներկայութիւնն ու քեմերի իւրացումը , տնտեսական աննախամեծելի իրավիճակը , և բազմաթիւ այլ պատճառների արդիւնք է մեր համայնքի ներկայ դրութիւնը:

Լոյս.-Իսկ Ձեր կարծի՞քը «Միասնականութեան» մասին:

Է.Բ.- Այդ հասկացութիւնը շատ ընդարձակ բացատրութեան կարիք ունի, սակայն մի քանի բառով կարելի ասել՝ նրան հասնելու համար կարիք ունենք մեծահոգիութիւն, հանդուրժողականութիւն, հասարակական և ազգային բարձր գիտակցութիւն, ունենալ բազմաբնոյթ մօտեցումներ՝ միևնոյն շահերի և ազգային արժէքների շուրջ: Չասենք «մէկ ազգ, մէկ եկեղեցի , մէկ մշակոյթ», բայց հակառակը կատարենք, ինչպէս այս օրերում տեսնում ենք որոշ շրջանակների կողմից դաւադրական քայլեր են կատարում: Այդպիսիները «Միասնականութեան» ուղղակի թշնամին են:


Լոյս.-Իրանահայ միւս մամուլի մասին ի՞նչ եք մտածում:

Է.Բ.- Ես ուրախ եմ , որ նրանք հրատարակում են, միասնակցութիւն և առողջ հասարակութիւն ունենալու համար կարիք ունենք տարբեր մօտեցումներ ունեցող թերթերի և հանդէսների:

Լոյս.-Ի՞նչ պատգամ ունէք:

Է.Բ.- Ես բոլոր խմբերին ու անհատներին հրաւիրում եմ մեր ազգային գերագոյն շահերի շուրջ համախմբել և պաշտպանել հայ մշակոյթը, հանդուրժել միմիանց, ընդունել քննադատութիւններ և վերացնել թերութիւնները: ■

Պատրաստեց Կ. Սարգսեանը



ծանօթագրութիւններով ու յաւելածներով, «Թեհրանահայութեան պատմութիւն», «Քեամարա գաւառի ընդհանուր մշակոյթն ու պատմութիւնը», «Արցախի պատմութիւն», «Շահնամեն և հայերը», «Միջին Արևելքի երկրների տոմարը», « Ալեմարկ Իրանահայութեան պատմութեան», իսկ հայերէնով՝ «Թեհրանահայութեան պատմութիւն», «Քեամարա գաւառի հայկական գիւղերի պատմութիւնը», « Համառօտ ակնարկ Իրանահայութեան պատմութեան»:

Լոյս.-Ո՞րն է ձիշտ թարգմանութիւնը:

Է.Բ.- Թարգմանութիւնը պիտի հարազատ և հաւատարիմ լինի իսկական բնագրին, լեզուն՝ ժամանակակից:Թարգմանիչը իրատւոյն չունի միջամտելու բնագրի մէջ,նա կարող է իր բացատրութիւնները ներկայացնել տողատակով:

ԿԱՐՄԻՐ ՎԱՐՂԻ ԿՏԱԷԸ

Աստղիկ Բարայեանի
«Իրական դէպքեր» գրքից

Գարուն էր: Օրը գեղեցիկ էր ու արեւատ, բայց հաւաքած մարդիկ լուռ էին ու տխուր: Ոմանք իրենց ողջ էութեամբ մոլորուած էին դառնագին, իսկ ոմանց աչքերից գլոր-գլոր ցած սահող արցունքի շիթերը պատմում էին նրանց ներքին այրող ցար: Մարդիկ հաւաքուել էին իրենց վերջին հրաժեշտը տալու գարուն չտեսած նկարիչին:

Նա մեծ երազանքով մեկնեց հայրենիք: Ուզում էր վրձինի միջոցով նկարագրել հայրենիքը՝ իր գեղեցիկ բնաշխարհով, տեսարժան վայրերով, հանրային հոծ կառույցներով եւ... Նա մտադիր էր հայրենիքը ներկայացնել այնպէս, ինչպէս որ կար, եւ թերեւ առաւել, ինչպէս անում էին բոլոր հայրենասէր մարդիկ: Նրա ստեղծագործութեան թեմաներից էին նաեւ «մարդը», «սէրը», «կեանքը» եւ... Բայց նրա իղձը չիրականացաւ եւ ամէն բան մնաց երազ:

Այդ տխուր պահին, երբ հողն իր գիրկն էր առնում վառ ապագայ խոստացող նկարիչին, յուշերով ետ դարձայ դէպի անցեալը: Դէպի նրա դպրոցական տարիները, երբ նա սովորում էր հայոց «Թովմասեան» դպրոցում: Յիշեցի նրա կայտառ դէմքը, ժպտուն աչքերը ու համեստ կեցածքը: Յիշեցի ու կարօտեցի նրան... Այո, կարօտեցի, յաճախ եմ կարօտում իմ աշակերտ-ուսիներին, բայց այս մէկը տարբեր էր, մանաւանդ, որ գիտէի, որ նա այլեւս չկայ...

Յիշեցի նրա «Կարմիր վարդ» կտաւը, որ հայրենիք գնալուց առաջ նւիրեց ինձ եւ այն-ինչ պատահեց այդ կտաւի հետ:

Աշնանամուտ էր, ու երկինքը ամպամած: Մէկ էլ յանկարծ փոթորկանման քամի բարձրացաւ ու սկսեց ուժգնօրէն սուրալ:

Մենեակում ուժեղ հոսանք առաջացաւ եւ մի ակընթարթում պատից կախւած «Կարմիր վարդի» կտաւը շղիմանալով այդ թափին՝ վայր ընկաւ: Նոյն վայրկեանին դեռահաս որդիս, որ բակում գնդակ էր խաղում, քամու ոռնոցից սարսափած ներս վազեց ու պատահականօրէն ոտքի տակ առաւ պատից վայր ընկած «Կարմիր վարդ»-ը: Որդուս կօշիկի կրունկը խրեց «Կարմիր վարդի» մէջ ու աղմկով պատռեց այն: Չգիտեմ ինչու սրտումս մի անանց ցաւ զգացի...

Չարմանալի բան: Տարիներ յետոյ նոյն եղանակին, հայրենի գրկում երիտասարդ նկարիչի ուժերը սպառուեցին եւ նա ծունկի գալով բնութեան կողմից տրուած անբուժելի հիւանդութեան դիմաց, պոկուեց կեանքի թփից ու թառամեց վաղաժամ ու իր «Կարմիր վարդ»-ի նման կրնկահար եղաւ ու...



Ապրիլեան Գարուն

Արփի Ալեքսանդրի
«Երջանկութեան արծազանք» գրքից

ՀԱՅԻ ԳԱՐՈՒՆԸ

Գարուն է նորից,
Եվ ամէն անգամ
Մի նոր գարնան հետ
Հայի աչքերում
Անցեալի ցավից
Վշտի ծիւեր են
նորից արթնանում,
Ծիւեր, որոնց գոց
Բջիջների մէջ
Կանչ կայ բողոքի
ու արդար դատի...
Իսկ դու՞ք ցեղասպան
Ու նենգ ոսոխներ,
Որ այս կանչերից
Ու բողոքներից
Խլացել էք յար,
Քարացել՝ ընդմիջտ,
Ինչո՞վ էք տարած...
Երեւի քանդիչ
Ու ավերակիչ
Մի նոր հնարքի
տենդով էք վառւած:

95-Թեհրան

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տէր իմ, ներիր ինձ, եթէ այս գիշեր
Հոգուս ոլորտում հաւատքից բացի
Շրջում են ուրիշ մեղաւոր մտքեր:
Չէ՞ որ տեսնում եմ՝ մեր ոսոխը հին
Հերքում է անվերջ գործած ոճիրն իր
Ու դեռ փորձում է անել ատելին,
Իսկ աշխարհը լուռ
Կարծես անգիտակ արարածների
Մի ջուղիր լինի,
Ո՞ր դատն է այսքան, այսքան ձգձգել,
Ո՞ր ազգն է այսքան տառապանք կրել
Ու դեռ համբերել:
Ես կարճ եմ գրել,
Մեղմ է իմ գիրը
Մեր ուրախության նման՝
չափավոր,
Այո, թող երգն իմ աղոթքի փոխվի,
Տէր իմ, այս անգամ մեր արդար դատին
Դու եղիր պաշտպան.
Եվ փակիր ճամփան անարդարության,
Եվ մեր դատն արդար լուծում ստանա:

Ապրիլ 1998 - Թեհրան

Աշակերտական յաջող բեմադրուքին

Վաչիկ Վարդանեան

Օրերս Թեհրանի «Նայիրի» Սրահի բեմից ականատես եղանք մի բեմադրութեան, որի բեմադրիչն էր իրանահայ երիտասարդ և համալսարանի արւեստի բաժնի ուսանող, բազմաշնորհ և մեծ ապագայ խոստացող Սերժիկ Յարութիւնեանը:

Սերժիկ Յարութիւնեանն իր շուրջ հաւաքելով «Թովմասեան» և «Սողոմոնեան» դպրոցների մի շարք ընդունակ աշակերտ-ուսիւնների, ստեղծել է մի նոր թատերախումբ, որի անդամների իւրաքանչիւրի նույնիսկ հայեացքից կարելի է կռահել, որ նրանք արւեստի իսկական սիրահարներ են, արւեստի նորեկ մշակներ, որոնք կարծես խոր համոզմունքով դաշինք կնքած լինեն՝ իրենց գերնպատակը դարձնել հայ արւեստին ծառայելը: Բեմի վրայ նրանցից իւրաքանչիւրը գալիս էր միւսի գործը լրացնելու համար: Որևէ կաշկանդաւածութիւն դերակատար-ուսիւնների մօտ չէր երևում: Ընհակառակը բեմադրութիւնը ընթանում էր շատ սահուն և բնական: Եւ, որ նրա գլխատորը նրանց մէջ նշմարող ակնառու հարագատութիւնն էր: Այս բոլորը ի հարկէ շնորհիւ նախ և առաջ Ս. Յարութիւնեանի: Նա անշուշտ հաւատացած է , որ մտերիմ մթնոլորտում միայն կարելի է բաղձալի արդիւնքի հասնել:


Սերժիկ Յարութիւնեանը, Արտաշէս Քալանթարեանի «Մի բոտ ծիծաղ» գրքում տպագրուած կարճ թատերգութիւնները հիմք դարձնելով, ստեղծել էր մի բեմադրութիւն: Բեմադրիչ-հեղինակը նպատակ ուներ հանդիսատեսին համոզելու՝ կեանքին նայել այնպէս, ինչպէս որ է: Նա հանդիսատեսին հրաւիրում էր հայելուն նայելու ոչ թէ ինչ-որ շինծու, այլ իր իսկ կերպարը տեսնելու համար: Նա խորհուրդ էր տալիս հիմք ընդունելով աշխարհահռչակ մարդկանց կեանքի էութիւնը, խորհել նրանց անհատականութեան մասին (ի հարկէ նրանք կարող են լինել դրական և բացասական կերպարների տէր մարդիկ):

Այս գաղափարը իրագործելու համար դրագներ էին ընտրուել մեր առօրեայ կեանքում տեղի ունեցող իրադարձութիւններից:

Այս բոլոր նպատակներին հասնելու համար ընտրուել էր կատակերգութեան ոճը, որում մերք ընդ մերք լրջութիւն էր նշմարուում: Իսկ հանդիսատեսը համոզեց, որ լոկ ծիծաղելու համար չի ներկայացել:

Համեստ էին հարմարութիւններն ու հնարաւորութիւնները, սակայն դա բեմի վրայ չէր երևում: Գործողութիւններն ընթանում էին սահուն, դիմամիկ և գրեթէ անթերի:

Այս բոլոր դրական կողմերով հանդերձ երկու կարևոր հարցի մասին անհրաժեշտ է անդրադառնալ: Նախ բեմադրութեան ոճը իրանահայ հանդիսատեսին



խորք էր: Յաւօք մեր հանդիսատեսը քիչ գաղափար ունի Բրեխտի հեղինակած եղանակի մասին, հետեւաբար երբեմն շփոթութեան մէջ էր ընկնում: Բնականաբար այստեղ խօսքը այդ եղանակի առաւելութեան, կամ յատկութեան մասին չէ, քանզի համեստս ի սկզբանէ այնքան էլ այդ եղանակի համակիրը չեմ:

Աւելի կարևոր հարցը, լեզւի հարցն է: Յաւօք այնքան էլ չէր գատուում թէ կերպարներից ով է մաքուր հայերէն խօսում, կամ ով է ինչ բարբառով խօսում: Մենք նույնիսկ օտար լեզուներից ընտրուելիք բառերի մէջ պէտք է բժախնդիր լինենք: Վերջապէս մենք լեզուն աղաւաղելու իրաւունքը չունենք:

Բեմադրութեան տարբեր կերպարների մէջ հանդէս եկան Մեքօ Մանուչերեանը, Լուսինէ Մարկոսեանը , Սասունիկ Սաղիդեանը, Մեղմիկ Խաչատրեանը, Էդրիս Իսայեանը, Թենի Քէշիշեանը, Արաքօ Դիլանչեանը, Մենուա Իսմաիլեանը, Մեղրիկ Մինասեանը և Սերժիկ Յարութիւնեանը :

Կենտրոնական դերում հանդէս եկաւ ինքը՝ Սերժիկ Յարութիւնեանը, որը բեմադրութեան առանցքն էր կազմում: Ինչպէս վերը նշեց բոլորը յաջող ներկայացան յանձնուած դերերի մէջ, սակայն անարդարութիւն կլինէր եթէ չշեշտէինք յատկապէս Օշին Ալեքսանդրեանի անունը: Վերջինս իրօք մի նոր յայտնութիւն է: Ըստ իս եթէ նա ճիշտ հիմքերի վրայ շարունակի իր թատերական և բեմական ընթացքը, անտարակոյս մօտ ապագայում կը դառնայ մեր եզակի դերասաններից մէկը:

Բեմադրութիւնը հովանաւորում և օժանդակում էր «Սողոմոնեան» դպրոցի ծնողական խորհուրդը, չխնայելով որևէ ջանք: Խմբին նաև մեծապէս օժանդակել էին պարոնայք Ժորժ Աբրահամեանը և Ջանիկ Աբգարեանը:

Վերջում թարգմանը լինելով նաև բոլոր ներկաների, շնորհատրելով խմբի յաջողութիւնը, նորանոր վերելք ենք մաղթում նրանց:



Թեհրանահայ համայնքի պատմությունից

Էր. Բաղդասարեան

Շար. նախորդ համարից

Խորհրդային Հայաստանի կառավարության հայրենադարձության գծով լիազոր Ռ. Քալանթարը բարձր գնահատեց Ռոման Իսաեւի, հայրենադարձության կոմիտեի, նրա զանազան բաժանմունքների ու բոլոր ենթակոմիտեների կատարած անձներ աշխատանքը, ինչպես նաեւ «Աշխատանք» եւ «Վերածնունդ» օրաթերթի, Թեհրանի «Մշակոյթ» երիտասարդական ընդհանուր միության միւս կազմակերպությունների եւ անդամների նվիրածութիւնը հայրենադարձության գործին²⁵:

Սակայն այդ գործնապես խոչնդողում էր նաեւ հետաադիմական որոշ ուժերի ակտիւ գործունէութեամբ: Այսպէս, Թւարիզ շրջանի Գիրջի գիւղի բնակիչների անունից 1946 թ. Իրանի վարչապետ Ղաւամ-օլ-սալթանէին եւ Խորհրդային Միութեան դեսպանութեանը կեղծ հեռագիր է ուղղարկում, որտեղ ասած էր, «Իրանահայերը չեն փափագի Հայաստան գնալ, քանի որ իրենք ծնել են Իրանում եւ կսիրեն նրան»²⁶: Յիշեալ գիւղի բնակիչները տեղեկանալով այդ հեռագրի մասին, սովետական դեսպանին են դիմում մի յայտարարութեամբ. «Խոր ցաւով իմացանք, որ չորս հոգու ստորագրութեամբ գրգռիչ հեռագրեր ուղարկած են վարչապետին եւ սովետական դեսպանատուն: Մենք բոլորս սրտանց հաղորդում ենք, որ վաղուց երազել ենք ներգաղթել դէպի մայր հայրենիք: Մենք ամբողջ գիւղով դիմել ենք ներգաղթի կոմիտէին, առաջին հերթին եւ մեր ծախսերով ճանապարհելու Հայաստան: Մենք բոլորս հաւատացած ենք որ մեզ չեն մերժի Խորհրդային Հայաստան ներգաղթելու»²⁷:

1958 թ. անհատական հրատերերով մշտական բնակութիւն հաստատելու նպատակով 10-ից աւելի ընտանիքներ վերադարձան Խորհրդային Հայաստան²⁸:

Աւելի քան մէկ տասնեակ (1950-1961 թթ.) տարիների ընթացքում անհատական հայրենադարձութեան փորձը ցոյց տուց, որ այդ եղանակով բնաւ հնարարութիւն չէ բաւարարել ստացուող բազմաթիւ խնդրանքները: Ուստի Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար մարմինների

միջնորդութեամբ ՍՄԿԿ կենտկոմը եւ ՍՍՀՄ մինիստրների խորհուրդը 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեցին նոր զանգաւածային հայրենադարձութեան մասին²⁹:

Անհրաժեշտ է նշել, որ Իրանում հայրենադարձութեան փաստը ուներ լուրջ խոչնդողներ: Այնտեղ 1953 թ. տեղի ունեցած հակադեմոկրատական յեղաշրջումից յետոյ, երբ իսլամ վերացան առաջադիմական կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները, եւ ստեղծւած ռեակցիոն վարչակարգը հակախորհրդային դիրք գրաւեց, իրանական իշխանութիւնները համաձայնելով հայերի զանգաւածային հայրենադարձութեանը, այնուհանդերձ բազմաթիւ խոչնդողներ էին յարուցում: Երբ հայրենադարձութիւնը նոր փուլ նախապատրաստելու նպատակով Իրան ժամանեցին ՀԽՍՀ մինիստրների խորհրդի ներկայացուցիչները, իրանական իշխանութիւնները անհիմն կերպով ձգձգում էին այդ հարցերի լուծումը: ՀԽՍՀ ներկայացուցիչներին չէին թոյլատրում մեկնել այն քաղաքներն ու շրջանները, ուր հայեր էին ապրում, ձգձգում էին հայերի փաստաթղթերի ձեւակերպումը³⁰, ենթարկում էին հարցաքննութիւնների, եւ այլն:

Անկասկած է, որ այդ գործում որոշակի դեր էին կատարում Թեհրանում ամերիկեան դեսպանութեան աշխատակիցները: 1952 թ. հրատարակւած մի գրքոյկում հայրենադարձութիւնը չարագործութիւն եւ աղէտ է համարում³¹:

Թոյլտութիւն ստացած հայերը անվտանգութեան մարմինների կողմից ենթարկւում էին խտրականութեան ու հետապնդումների, եւ պարտադրում էին սահմանփակ ժամկետում՝ հեռանալ Իրանի սահմաններից: Այդ էր պատճառը, որ նախատեսւած 3000,-ի փոխարէն 1962 թ. հայրենադարձեց ընդամենը 53 մարդ³²:

Չնայած այդ ամենին, խորհրդային դեսպանատան հետևողական ջանքերի շնորհիւ յաջողեց Իրանօց վերադարձնել մեծ թով հայերի: 1962-1967 թթ. ընթացքում Իրանից հայրենիք վերադարձաւ 2699 մարդ³³: Ուրեմն 1922-1962 թթ. ընթացքում իրանահայ ներգաղթողների թիւը շուրջ 45.000 մարդ էր հաշւում³⁴, եւ 1962-1982 թթ. ընթացքում Իրանից հայրենադարձեցին 24283 մարդ³⁵:

Ներկայիս, թեհրանահայութիւնը Իրանի հայ բնակչութեան առաւել զանգաւածային մասն է կազմում: Մեծ թով հայեր հեռացել են երկրից նաեւ 1979 թ. իսլամական հեղափոխութիւնից յետոյ:

ՎԵՐՋ

²⁵ «Վերածնունդ», Թեհրան, 1946, նոյեմբերի 10:

²⁶ «Վերածնունդ», Թեհրան, 1946, նոյեմբերի 10:

²⁷ «Վերածնունդ», Թեհրան, 1946, յուլիս 16:

²⁸ Հ. Պահլեւանեան, Իրանահայ համայնքը, Երևան, 1989, էջ 187:

²⁹ Հ.Մելիքսեթեան, Հայրենիք- Սփիւռք առնչութիւնները... էջ 254:

³⁰ Նոյն տեղը, էջ265:

³¹ Արզոս, Ներգաղթի աղէտը եւ աղէտեալների շահագործումը, Թեհրան, 1952:

³² Հ. Մելիքսեթեան, նշւ. աշխ., էջ 265:

³³ Նոյն տեղում, էջ 279:

³⁴ ՀՄՀ, հ. 6, էջ 209, եւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ. 8, էջ 287:

³⁵ Հ. Մելիքսեթեան, նշւ. աշխ. էջ 299:

Ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

(Շար. համար 44-ից)

Բութը դրում է՝
Բացայայտեալի վրայ՝ բացայայտչից անջատելու համար.

Ինքը՝ Սահականոյ թագուհին, սիրում էր յաճախ նստել այդտեղ:

Նրանից քիչ հեռու կանգնած էր Մարգարետունու որդին՝ Գոռ իշխանիկը:

2.Տրոհած հետադաս որոշիչ ունեցող որոշեալի վրայ:

Նկատի ունեցէք, որ որոշիչը սովորաբար դրում է որոշեալից առաջ.

Դէպի վանք տանող ճանապարհներն անցնում էին նեղ արհեստներով, անհատակ վիհի եզրերով, սարսափելի կիրճերի միջոցով:

Սակայն յաճախ, յատկապէս գեղարեստական խօսքում, որոշիչը կարող է դրուել որոշեալից յետոյ եւ տրոհուել բութով.

Դա մի սիրուն ասպետ էր՝ հպարտ ու լուրջ:

Թում էր, թէ շարժում էին նրա գանգուրները՝ ծխագոյն եւ ծխի մման ոլորուն:

Որպէս հետադաս որոշիչ հանդէս են գալիս գոյականի գործիական, բացառական, ներգոյական հոլովածները.

Այդ ամէնի վրայ իշխում էր Գագիկ թագաւորի ընդարձակ ու հոյակապ արքունիքը՝ կամարակապ պատշգամբներով. ոսկեգօծ ու դրազագարդ դահլիճներով:

Մորութը խուզած էր, հագին ուներ պատաստուած, չորս-հինգ տեղից կարկատած մի երկար բաճկոն՝ կապոյտ շալից:

Երեսունի մօտ մաշուած մի կին էր նա՝ թախծալի ժպտի ցոլքերը խոշոր աչքերում:

3.Նախադասութեան զեղչուած անդամի կամ զեղչուած բառի փոխարէն.

Քամին երեկոյեան ծովից էր փչում, իսկ երբ բարձրանում էր Լուսաստղը՝ սարից (իսկ երբ բարձրանում էր Լուսաստղը, փչում էր սարից):

Տախտակամած հատակին երփներանգ գորգն էր, գորգի վրայ՝ նրանց անկողինները (գորգի վրայ նրանց անկողիններն էին):

Մեր փողոցում բացող հրապարակներից մէկում երեք օր է՝ մի քարաւան է կանգ առել (երեք օր է, ինչ մի քարաւան է կանգ առել):

Թում էր՝ շուտով ձեռք էր բերելու բաղձալի ազատութիւնը (թում էր, թէ...):

Նկատի ունեցէք՝ զեղչուած ստորադասական շաղկապի փոխարէն բութ դրում է, իսկ բացակայող համադասական շաղկապի փոխարէն՝ ոչ:

4.Մեկնական այն է, այսինքն, թէ ինչ է, այսպէս բառերի վրայ, որոնց հետեւում է բացատրութիւն.

Նա մոռացել է քունը եւ կէսգիշերին, մէջքը ծռած, գրում է, ջնջում, թէ ինչ է՝ Ալիմեանները պիտի ապրեն ապահով ու անհոգ:

Աշտը սիրով ընդունեց ընկերոջ առաջարկը, այն է՝ ընդհատել աշխատանքը եւ գնալ հարսանքատուն:

Վերջապէս կապաւորը զեկուցեց, որ տառապելւնների համար փրկութեան դուռ է բացուած, այսինքն՝ կապը արտաքին աշխարհի հետ վերականգնուած էր:

5.Հակիրճ, մէկ բառով արտայայտուած ուրիշի ուղղակի խօսքից առաջ, երբ այն գրում է առանց չակերտների.

Հիւանդը անընդատ կրկնում էր՝ չեմ ուզում, եւ ձեռքերով իրենից կարծես թէ վանում ինչ-որ բան:

Նախադասութեան առաջինի վրայ՝ իմաստային շփոթումը կանխելու համար.

Տարիների հեռից՝ անցած այդ օրն ինձ պատկերանում է մեր տան պատին խփուած այն գորգի տեսքով:

(Այստեղ բութը ցոյց է տալիս, որ տարիների հեռից-ը վերաբերում է ոչ թէ անցած բառին, այլ պատկերանում է ստորոգեալին):

Բաւական էր տեսնել նրանց թաթերի՝ ձիւնի վրայ տպաւորուած հետքերը:

(Թաթերի բառը լրացնում է ոչ թէ ձիւնի-ն, այլ հետքերը բառին):

Թարկութիւն արտայայտող նախ, ապա, առաջին, երկրորդ եւ այլ բառերի վրայ.

Մայրը Արտակին արգելեց դուրս գալ բակ. նախ՝ նա դեռ չէր ճաշել, երկրորդ՝ դասերը չէր պատրաստել, երրորդ՝ աշխարհագրութիւնից անբաւարար էր ստացել:

Տրոհող դերբայական դարձածի կետադրութիւնը

Դերբայները գործողութիւն ցոյց տող այն բառերն են, որոնք չեն արտայայտում դէմք, թիւ, եղանակ, ժամանակ,

Հակադրել միմյանց հետեւեալ ձեւերը.

դրեցի... գրել, գրելիս, գրած

կարդում էի... կարդացած.կարդալ, կարդացող, կարդալս:

Ինքնուրոյն պաշտօնով հանդէս եկող դերբայները կարող են ունենալ լրացումներ եւ ձեւաւորել դերբայական դարձանք.

Դերբայական դարձուածը նախադասութեան մնացած մասերից տրոհում է. երբ այն լրացնում է ստորոգեալին կամ հանդէս է գալիս որպէս յետադաս որոշիչ: Տրոհող դերբայական դարձ-

լածները սովորաբար ձեւաւորում են յարակատար գերբայով (գրած, կարդացած) եւ անորոշ դերբայի տրական (գրելու, կարդալու) եւ գործիական (գրելով, կարդալով) հոլովածներով):

Նախադասութեան մնացած մասի նկատմամբ նախադաս կամ յետադաս դերբայական դարձ-լածները տրոհում են բութով.

Սաստիկ ձմռան պատճառով իրենց համար կեր չգտնելով՝ նրանք գնում էին բնակատեղիները եւ սպասաստան փնտռում:

Դռան հռոցը լսելով՝ նա աչքերը բաց արեց:

Շիրիմի մօտ, մերկ յատակի վրայ ծունր իջած՝ խոնարհել էր մի մարդ:

Սրնգի ձայնից դիտւած՝ սոռանում էին տակի անդունդը:

Շապուռի արքան մի ձիով ճողոպրեց՝ բանակը գերի թողնելով հայերին:

Սարերը ամռանը կատարեալ դրախտի են փոխարկւում՝ հիւրասիրելով իրենց ստորոտներում եւ լանջերի ու գագաթների վրայ անթիւ ոչխարներ ու այլ կաթնասուններ:

Դաւիթ-Բէկը նստած էր դահլիճում՝ շրջապատւած իր աւագներով:

Բերդի ներսն ու դուրսը խումբ-խումբ պառկած էին զորքի ջոկատները՝ գլուխները պայուսակների կամ ձիաթամբերի վրայ դրած:

Նա իջնում էր Քաքէ լեռան բարձունքներից՝ Արածանիի արցաթափայլ ալիքների մէջ լողանալու:

Երիտասարդ դիւցազունները թաքնւում էին Աշտիշատի անտառի մթին ծառաստանի մէջ՝ հեռից դիտելու գեղեցիկ աստուածուհու լոգարանը:

Մի նախադասութիւնը կարող է ունենալ մի քանի նախադաս կամ հետադաս դերբայական դարձ-լածներ: Նախադաս դերբայական դարձումներից միայն վերջինն է տրոհում բութով, միւսների միջեւ դրում է ստորակէտ.

Դռան առաջ ձին թողնելով, շտապ ներս վագելով ու կատարւած աւերածութիւնը տեսնելով՝ Վահրամը թեւթափ ... :

Երբ նախադասութեան կազմում կան մի քանի յետադաս դերբայական դարձումներ, բութով տրոհում է միայն առաջինը, իսկ միւսների միջեւ, եթէ չկայ համադասական շաղկապ, դրում է ստորակէտ.

Աղջիկը զայրացած հեռացաւ խորհրդածողովից՝ առանց հրաժեշտի խօսք ասելու, վրդովւած մասնակիցների անսկզբունքայնութիւնից եւ քթի տակ հանդիմանանքի խօսքեր մրմնջալով:

Երբ տրոհող դերբայական դարձումը միջադաս է, այն երկու կողմից անջատւում է ստորակէտով.

Բոցն ու ծուխը, կատաղի պտոյտներ գործելով, շիկացրել էին օդը:

Մ խ ի թ ա ռ Գ ո շ

Վ ա զ ը եւ Մ ո ռ ե ն ի ն

Գարնանը, երբ վազը որթակոտոր էր եղել եւ արտասում էր, եկան բոլոր տունկերը նրան մխիթարելու, նրանց հետ եկաւ նաեւ մորենին:

-Մի՛ լար,- ասում են,- դարձեալ զուակները կը ծնես:

Եւ նա պատասխանում է.

-Կը ծնեմ, եւ դարձեալ կը կոտորեն, եւ դա ի՞նչ մխիթարութիւն է: Մխիթարանքն այն է, որ իմ կենդանի մնացած որդիները պտուղ կը տան եւ մարդկանց ուրախութեան պատճառ կը դառնան:

Եւ սրանով էր վազը մխիթարում իրեն:

Իսկ մորենին ասում է.

-Չկայ քեզ մխիթարութիւն, որ ինձանով սրբես աչքերդ:

-Շնորհակալ եմ այգեգործից, որ պոկւում է քեզ իմ արմատից,- պատասխանում է վազը:

Առակս յայտնում է, որ պէտք է միառժամանակ մխիթարել կենդանի մնացածներով, որ մահկանացու է մարդկային ցեղը, եւ իսկական մխիթարութիւնն այն է, որ կենդանի մնացած ժառանգները լինեն տիրոջը հաճելի: Բայց անմիտների խօսքը, ինչպէս մորենունը, աւելի զայրացնող է, քան՝ մխիթարութիւն սգաւորին, որ շնորհակալ կը լինի, եթէ բոլորովին չտեսնի անմիտ մխիթարիչին:

Մ ո ռ ե ն ի ն եւ Վ ա զ ը

Ո՞րքա պահելով վագի դէմ, մորենին ասաց.

-Քեզ նման կը բարձրանամ եւ կրկնակի պտուղ կը տամ եւ կը գերազանցեմ քեզ, որովհետեւ ձմռանը անթառամ եմ լինում:

Վազը հակաճառեց նրան.

-Քո պարծանքը կատարեալ կը լինի, երբ աշնանը հաւաքես հնձանում:

Իսկ աշնանը մորենին ոտնատակ եղաւ:

Ն ո ն ե ն ի ն եւ Թ Վ ե ն ի ն

Նունենին եւ թզենին կամեցան սիրով կապել միմեանց հետ ու երդեցին քաղցրութեամբ, բայց նունենու թրութեան պատճառով ձանձրացաւ թզենին, եւ նրանց դաշինքը խախտեց:

Առակիս իմաստն այն է, որ սիրողները նախ պէտք է փորձեն միմեանց բարքերը, թէ բոլոր կողմերով նմա՞ն են իրար, իսկ եթէ ոչ՝ հեշտութեամբ կը խախտի սէրը:



ԱՊՐԻԼԻ 7-Ը ՄՅՐԵՐԻ ՏՕՆ

*Աստուած հայ ժողովրդին պարգևեց
ամենագերագանցը՝ հայ մայրը*

Երբ հիւանդ է մայրիկը

Վարդուհու մայրիկը հիւանդացել էր: Բժիշկը ամէն օր գնում էր նրանց տուն: Վարդուհին շատ էր տխրել: Մայրիկը առաջւայ նման կատակներ չէր անում, քիչ էր խօսում և անվերջ տնքում էր:

Բայց դա երկար չտևեց:

Մի օր էլ, երբ Վարդուհին վերադարձաւ դպրոցից, տեսաւ բժիշկը քննում է մայրիկին:

-Դեռ երեք օր էլ պէտք է պառկէք, եթէ ոչ հետևանքը վատ կը լինի,- ասաց նա:

Մայրիկը տխրեց:

-Վա՛յ, բժիշկ ջան, ես լաւ եմ, ես կարեղ եմ, աղջիկս մեղք է, տան բոլոր գործերը նա է անում:

Վարդուհին, որ լսել էր նրանց խօսակցութիւնը ասաց.

-Մայրիկ ջան, դու հանգիստ պառկիր, ես էլի ամէն ինչ կանեն: Տունն էլ կը հաւաքեմ, ամաններն էլ կը լւանամ, թէլ էլ կը դնեմ: Պառկի՛ր, որ շուտ առողջանաս:

-Ապրե՛ս, ասաղջիկս,- ասաց բժիշկն ու շոյեց փոքրիկ աղջկայ գլուխը:

Իմ հայրենիքը, անուշ մայրիկը

Սիրա Կապուտիկեան

Ինչպէս մայր հողն է կեանք տալիս ծաղկին,

Արևն է ժպտում, որ միշտ ծաղկի,

Այապէս ինձ սնել

Ու կեանք են տուել

Իմ հայրենիքը,

Անուշ մայրիկը:

Առատ են արել սերն ու բարիքը,-

Որ անվիշտ աճի իրենց բալիկը,-

Այապէս ինձ սնել

Ու կեանք են տուել

Իմ հայրենիքը,

Անուշ մայրիկը:

Աճած մեր կեանքի արևի հրով՝

Ես նրանց կը տամ իմ կեանքը սիրով

Որ անպարտ մնան,

Որ հպարտ մնան

Իմ հայրենիքը,

Անուշ մայրիկը:

Առաջադրանք

Փորձիր պատասխանել, թէ ի՞նչով են նման հայրենիքը և մայրիկը:


Հանելուկներ

*Աշխարհի հետ ծնել է,
Աշխարհի հետ մեծացել,
Բայց երեսուն օրից դէն
Մինչև հիմա չի անցել:*

{Լուսիս}

*Մի թուխ ախպեր
Մի լոյս ախպեր
Մէկ-մէկու չեն կարող յաղթել:*

{Գիշեր-ցերեկ}



ԼՐԱՅՐՈՒ ԿԻՍԱՏ ՆԿԱՐԸ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐԻՐ

Կազմեց Արմինէ Բարումեանը

«ԵՆՅՈՒՆԻՆՆԱԿՈՒՄ»

Կանադայում անթիլիասական թեմի ստեղծման կապակցությամբ «Լոյսի» խմբագրությունը ստացել է «Իրանահայ Ազգային և Մշակութային Միություն» կոչը: «Լոյսը» լինելով համայն հայության բոլոր տեսակետների արտայայտող մասնույ, սիրով իր այս սինակը տրադրում է ստացած կոչին:

Իսկապես շատ ցաւայի երևոյթ է, երբ այնպէս է ստացւում, որ ժողովրդի կամքին անյարիր անձինք, ինչպիսին է Արտաւազը Բաղումեանը բողոքի յայտնի պայմաններում չորս անգամ ընտրում է, իբր թէ ժողովրդի պատգամատր խորհրդարանում, և չարաշահում իրեն տրամ հանգամանքը: Նրանից տուժող անձի կողմից ստացել ենք մի գրութիւն, որը ներկայացնում ենք ստորև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԱՐԿԵՏԻՆԳ ԵՎ ԿՈՄՄՈՒՆԻԿԱՑԻՆԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ



ՇՈՒՄ

դու, գնալով վերադարձի անգլիացիները միջոցառումներով օգնելով միջոցառումներով և լուրջ վտանգի ենթարկելով, ի դերն է հանում բոլոր այն ջանքերը, որ բավական են երջանակահարկային կառուցման համար: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Միջոցառումները միայն օգնում են միջոցառումներով օգնելու, ինչպես նաև միջոցառումներով օգնելու: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Միջոցառումները միայն օգնում են միջոցառումներով օգնելու, ինչպես նաև միջոցառումներով օգնելու: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Միջոցառումները միայն օգնում են միջոցառումներով օգնելու, ինչպես նաև միջոցառումներով օգնելու: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Միջոցառումները միայն օգնում են միջոցառումներով օգնելու, ինչպես նաև միջոցառումներով օգնելու: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Միջոցառումները միայն օգնում են միջոցառումներով օգնելու, ինչպես նաև միջոցառումներով օգնելու: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ: Երբ հայրենի հողին վերադառնում ես, ապա հարկադրվում ես մտածելու, որ երբեք չես կարողանում հարկադրվել միջոցառումների օգնությամբ:

Ի ԱՄՄ Վարչություն

2002 թվականի փետրվար

Բաց նամակ թեմահայ Ազգային Մարմիններին

Գերազանց Սրբազան շայր,

ԹՅՈՒՄ Պատգամատրական ժողովի և Թեմական Խորհուրդ

Ներկա սագրող՝ Գուկաս Դարախանեան, ռուսոգ կողմն էմ հանի Իսլամական հորհրդարանում իրանահայության երեքնի մասգամատր: Եւ ներկայիս ԹՅՈՒ Պատգամատրական ժողովի անդամ: Արտաւազ Բաղումեանի նիւսական գեղճարարութիւնների: Չարկ են հանարում յիւսակել, որ սրանից շուրջ 7 տարի առաջ նա հեծ սկսեցի անհեղձական գործակցութիւն: Եր ինչպեղ խորհրդարանի մասգամատրի մասգամուն է: Չեսեւարս աս շուրջ նրան վստահեցի ասնեակ արհիւնի արդար ու Իրանեան աշխատանքի վստակը: Եւ որով սակի անհեղձական, որը վարկ ու մասիւս:

Սու ի դրսխաւսութիւն իմ: Բաղումեան ստրուաղոյն ծնելով չարաւանեց վստակութիւնս: Եւ կողմեւով իմ ու միւս գործընկերների խոչը զուար կազմող (աւելի քան 100 հազար ԱՄՆ դոլար) հարստութիւնը: ճողորեց՝ իմ ղեկով մեղաւորի ճեղ: որի համար անհրաւար ամիսներ բաճն ընկալ:

Իսկ Արտաւազ Բաղումեանի դէմ, դեռ 1998-ից (1377 թ.) դասական մի քանի գործեր ին յարուցել: յասկալուս խորհրդարանային ղիւղը չարաւանելու մեղաւորանով: որուն աւելացաւ նաեւ մեր բացած գործը (1):

Եւ ի վերջոյ նախնական Բնութիւնների արհիւնում եռամսեայ ազատարկութեան վճիռը արձակեց, սակայն իրաւապա մարմինները մինչ օրս չեն յաջողել նրան գնելու ու ձերբակալել: Սյս միջոցին, իմ եւ ռուսոգ կողմ հանդիսացող ոչ-հայ գործընկերների համար աս զարմանալի էր այն հանգամանքը, որ դուք մասգամատրական հովանաւորութիւն էի ցուցաբերում այդ սրտառոչական անձի հանդէմ: մինչեւ այն աստիճան, որ անգամ փորձում էի նա ազատարկութեան վճիռը փոխել սալ: Սյս է վկայում թեմի առաջնորդարանի՝ Ս. Սեդրակ եղի. Մարգեանի ստրուաղութեանը յղած նամակը՝ ղեմական աշխատակազմի գործին վերահասու դասարանի նախագահ՝ Չոք Ա. Էմիլին (2):

Սյս բաց նամակն ուղղում են Ձեզ՝ յայնքնուկ մեր բողոքը առ այս, որը Գուկ. երեւի. «արդար ու անձեղ մարդու մասգամատրութիւն» էլ համարում:

Մրցեմ, մեր յարգելի հոգեւոր իշխանութիւն ու ազգայինները մի՛ս են այդհան «զատարկութեան» հետեւում թողր հայրենակիցների՝ արդար թէ անարդար դասին: թէ՛ այս դարաւան այլ է՝ ելելով յիւսակի կուսակցական դէմ լինելու հանգամանքից:

Մրցեմ, դա ի՞նչ էր, որ ոմն Արտաւազ Բաղումեան կոչեցալը՝ Իսլամական Խորհրդարան է մեկ, այն էլ երկու իրաւայաջող ճատագրների համար՝ մասգամունով իրանական համայնի անհերք բայց կարծումը զարդելով շախմատային մութ գաղտնիքով՝ ինչպիսիւն է մեր համայնի ազնիւ մասկը, եւ ահա, Գուկ. նրան մասգամուն կանգնելով, աւելի էլ նստացնում մեր ժողովրդին:

Մրցեմ միւս չէ՛ր լինի, որ Գուկ նրան մեղաւոր թէ մեղաւոր եւ դասը՝ արդար թէ անարդար լինելու վճիռը վստակի իր իսկ մասախանասու մարմիններին՝ երկրի ասկանական իշխանութեանը: Եւ այդպէս փոխընդ իրաւապա չեսեւի նրան փրկելու, չէ՛ որ նախնական Բնութիւններով նոյնիսկ մարզել է նա հանցաւորութիւնը:

Գուկ, որովս ազգային ու հոգեւոր իշխանութիւն, մասաւոր էլ վեր կանգնել հասաւանդի մարն ու ճոզնի հաւերից, եւ մասկանելով Ձեր ղիւղի բարձրութիւնը, հեռու մնալ բաղումեանների ստեղծած ճանճից, որեղ կարող են խորակել նաեւ Ձեզ:

Գուկաս Դարախանեան
20 Փետրւար 2002 թ.

Պատահալի
- Ն. Ա. Օ. Տ. Ս. Կարա՛Է, կապուղիկովին,
- Բաւաւանող մտայնովին:

